

սպասելիք իրենց փճացած ու նեխած գոյութեանը համար։
 Յեղափոխութիւնը Արգելի Պատնէ այսօր, որուն կուգան զարնուիլ բոլոր անյագ շահախնդրութիւնները, բոլոր վայրագ ախորժակները, բոլոր ծառայած եօակա- նութիւնները։ Ու պէտք չէ՛ զարմանալ, տեսնելով որ հեռագհեակ իրարու կը մօտենան, կ'եղբայրակցին, կը նիզակակցին, շահախնդիրները, անձնամոլները, վատերն ու դասաշիջները ու կը կազմեն հակայեղափոխական պիղծ մեղսակցութիւն մը։

* * *

Երէկ անձնուէր յեղափոխականներն եղան, որ պարերու ստրկութեան տակ թմրած Հայը թօթուեցին ու Ազա- տութեան ճամբան ցոյց տուին անոր։ Առե՛ն է, որ հա- մոզուած ու կտուղ յեղափոխականները, որոնք ամէն դժուարութեան դէմ մաքառեցան մինչեւ հիմա, շտապեն առաջըր առնել այն ահաւոր վտանգին, ուր վատու- թեան կամաւորները կը նկրտին մղել շուարած ու ան- գիտակից ժողովուրդ մը։

Անհրաժեշտ է, որ՝ բարոյական քայքայումի ներկայ շրջանին մէջ՝ բոլոր յեղափոխականները, ի՛նչ ունայն բա- տերով որ ալ տարանջատուած ըլլան իրարմէ՛ իրարու մօտե- ցած, ձեռք ձեռքի տուած՝ հեռացնեն Հայ ժողովուրդը վիթխարի Դասաշիջութեան մը յաւիտենական Ամօթէն։


Ամէն բանէ առաջ, Յեղափոխական Իտէալին ան- եղծութեանը նախանձախնդիր՝ անհրաժեշտ է, որ Հայ յեղափոխականները՝ եղբայրական վստահութեամբ մի- ացած, ամբացած՝ թուժք մը կանխին Ուրացումի ու Մատնութեան հստանքին դէմ, որ կը սպառնայ մեր ցե- ղին մէջ մարել արդարութեան ծարար ու խեղդել տը- ժանապատուութեան ու ընդվզումի ամէն աղնիւ ու առ- նական զգացում։

Թո՛ղ Դաղափարին հաւատարիմ զինուորները՝ ար- մուկ արմուկի՛ սեղմեն իրենց խրոխտ կարգերը։ Երէկ- ուան պայքարներուն վաղորդայնին՝ մեկուսացած, սրտ- մտած կամ մտացուած յեղափոխական ընկերներն ալ թո՛ղ պարս զան իրենց տրտում ու աժուլ լքումէն։


Առե՛ն է, որ յեղափոխականները մօռնան առելու- թեան, կիրքի, պզտիկ քէներու ու գժտու՛նքու եւ անձ- նական պզտիկ նկատու՛նքու ոգրալի անցնալը։ Ամե- նէն շահագործուած, ամենէն լքուած մեր խեղճ Հայ- բնիքին սիրուն՝ թո՛ղ իրարու գիթի նետուին, թո՛ղ զի- րար ողջագուրեն, ու՛ միահամուտ խանդավառութեամբ՝ Յեղափոխական Դրօշը ախրաբար պարզած՝ հզօր, յան- դուզն ու յաղթական քայլերով ժողովուրդը առաջնոր- րեն զէպի նուիրական ու անյեղի Նպատակը։

Ատելութեան մահագուժ Ղօղանջն է որ կը զարնուի։ — Յեղափոխական ընկերներ, Ատելութեան թաղումին պատրաստուեցէ՛ք...

ԱԶԱՏ ԽՕՍԲԵՐ



ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ



Այսօր, եթէ կայ ժողովուրդ մը, որ պիտի իրաւունքն ունենար տրանջալու թէ չունի իրմով զբաղող, իր ճա- կատարին ուշադիր ու հոգածու, իր պատուոյն նա- խանձախնդիր ու իր ցաւերուն կարեկից զաւակներ՝ Հայ ժողովուրդը չէ՛ ան ապահովապէս։

Չէ՛, ժողովուրդի ախոյեաններուն պակասէն չէ՛, որ կը տուայտի ու կը սգայ Հայը, անոնց հազուադատու- թենէն չէ՛, որ կը բարզուի ու կը լեռնանայ Հայ Ֆառա- պանքը։ Ընդհակառակը։ Անոնց թիւը հեռագհեակ ստուա- բանալու վրայ է, անոնք կը վխտան, կ'եռուզեան ար- տասահմանի ամէն կողմերը։ Երբէ՛ք տեսնուած չէր ժո- ղովուրդի բարեկամներու ասանկ խանդավառ ու մեծա- ժխոր առատութիւն մը։ Ամէն առտու ազգային նոր փըր- կիչի մը, նոր նախախնամական մարդու մը կամ խմբակի մը աւետիսը կը բերէ մեզի։ Ամէն քայլից տտոնցմէ մէկուն կը հանգիպիս ու ամէն տեղ անոնց վեհանձն, կորովի, խօստաճառատ ու տիրական ձայները կը լսես։

Միակերպութեան տաղտկացուցիչ անշահեկանու- թիւնն ալ չունին անոնք։ Ամէն տեսակէ ու ամէն տա- րաքէ չեն պակսիր ժողովուրդի ախոյեաններ։ Աշխար- հական, կղերական, պատուելի ու մտաւորական՝ ա- մենքն ալ մէկ նշանաբան մը ունին, մէկ երգում մը ը- րած, մէկ նպատակ մը ուխտած են, — « ժողովուրդին շա- հէբը » պաշտպանել, « ժողովուրդին բռնաբարուած իրա- տւանքները » յարգել տալ, ժողովուրդը ժամ առաջ փրկել։ Այս շիրմեռանդ ու լլկիչ մտահոգութեան մէջ պրկուած, ասանց շարժելու իրենց հանգիստ ու ապահով անկիւն- ներէն, տոտնց քայլ մը առնելու զրկանքի ու զօհողու- թեան ճամբաներէն, առանց անդամ մը մօտենալու, ծոխու ժողովուրդին ցաւերուն վրայ, շարունակելով հանգերձ իրենց նստիւքական ու փրկարար անձերուն նիւթական բարօրութեան անսահման բազմապատկումին հողելին հետապնդի՛ զիչեր ցորեկ ժողովուրդին կը մտածեն, ա- նոր սիրուն ախորժակին կը կորսնցնեն ու քուններին կը փախցնեն եսական վայելքներու ծոցին մէջ։

Ժողովուրդին այս ինքնակոչ ախոյեանները՝ թէ՛ն, ի- րենց արտաքին երևոյթովը, թիչ շատ իրարմէ՛ կը զանա- զանուին՝ սակայն զգալապէս չեն տարբերի իրարմէ՛ գործունէութեան։ — Եթէ կարելի է այս անունը տալ ժոզ- վրդօրօտութեան շահախնդիր կամ փառասնեղ սգորու՛նք- բու — իրենց նախընտրած եղանակներուն մէջ։

Ամենքն ալ, առանց բացառութեան, էն գոհհիկ տեսակէն տէմակօլիներ են: Անդադրանք մը, գոր՝ իրենցմէ ոմանք՝ թանկագին զէնք մը ընել վարժուած էին երէկ յեղափոխականներուն զէմ:



Յեղափոխական բրորականտը սակայն իր տրամաբանական անհաշտելի ուղղութեան կը հետևի: Սկզբունքներու, զաւանանքի ու կարգապահութեան զէմ մեղանշումները դաւանանութիւններ կը նկատուին համոզուած ու անկեղծ յեղափոխականներու կողմէ: Մեղապիտեց լուծիւնները, երկզիմի խօսքերը, շահախնդիր ու նենգաւոր զիջումները չեն կրնար ներուիլ, հանդուրժուիլ: Յեղափոխական բրորականտը ո՛չ մէկը ու ո՛չ մէկ բան կրնայ խնայել, որ իր առջին խօշընդոտ ըլլալ ու արգելք ցցուիլ կը յաւակնի: Ամենուն ջուրին երթալու, ամենուն հետ ազէկ մարդ ըլլալու, ամենուն խարրը չկոտրելու պոռնիկ սիստէմը չի կրնար երբէ՛ք հաշտուիլ յեղափոխական իտէալին անյեղի ու ուղղամիտ յղացումին հետ: Նուիրական ու անձեռնմխելի սկզբունքներու հետ խաղալը ոճրագործ սրբապղծութիւն մըն է Յեղափոխական Եկեղեցիին մէջ:

Ինչ որ ալ ըլլան ասանկ հաւատարիմ ու անողոք ուղղութեան մը անպատեհութիւնները՝ մերինին պէս ստրկացած ցեղի մը մէջ—երբ ժողովուրդը, երբ տառապող ու ջախջախուած ամբոխն իսկ յաճախ սիրտը կ'ունենայ սկզբունքի ու գաղափարի զիջումներ պահանջելու իր առաջնորդներէն, երբ՝ իրենց հայրը, մայրը, քոյրը, եղբայրը, կիներն ու զաւակը զոհ տուած Հայեր երեսը կ'ունենան փափաքելու որ աչք գոցուի իրենց անտարբերութեանը ու պարտաճանաչութեան օակարկութիւններով յարմարուիլ կը փորձուին Յեղափոխութեան հետ—ի՛նչ որ ալ ըլլան անպատեհութիւններն ու վտանգները բացարձակապաշտ ու ճշմարտապէս յեղափոխական ուղղութեան՝ պէտք է, անհրաժեշտ է, որ Յեղափոխութիւնը անվրթար ու անարատ մնայ իր իտէալական բարձրութեանը մէջ: Յեղափոխականները պատասխանատու են ասոր ու իրենց սարքական պարտականութիւնն է հսկել Յեղափոխական Գաղափարին անեղծ ու անստուեր պահպանմանը ու ծառանալ՝ անոր փեսօել, զայն հարուածել ու սպաննել նկրտող ամէն լիբր ու յանգուզն ոտնձգութեան զէմ: Ու եթէ կարելի չըլլայ, այս ժողովուրդին մէջ, Յեղափոխութիւնը շարունակել, առանց զայն մնառելու, առանց անոր անփոփոխ ու արիւնով նուիրագործուած սկզբունքները խոտելու, կտրտելու, զոհելու՝ ատիկա պիտի ապացուցանէր ինքնին որ մեր ժողովուրդը անարժան է Ազատութեան:

Մենք այսպէս կը խորհինք, ասանկ համոզուած ենք, ասանկ կը հասկնանք յեղափոխական բրորականտը ու՝ ա-

րևին տակ՝ չի կայ բան մը որ կարենայ մագի չափ շեղել մեզի այս ուղղութենէն: Ու ասոր համար է որ չենք զարմանար, երբ մեր ճամբուն վրայ կը լսենք երբեմն վրդովման վարանոտ մբմունջներ, ստրկամիտ սահմակումներ, մոլեգնած ու անկարող ատելութիւններ:

Ժողովուրդին ինքնակոչ ախոյեաններէն կ'ուզան առաջին անհամակիր ձայները: Այդ մարդիկը իրենց գոյութիւնը վտանգուած կը տեսնեն մեր աներկղիմի ու ճակատաբաց յառաջխաղացութեան առջեւ: Ողբալի ու ծիծաղելի կացութեան մը մատնուած են անսնք, տեսնելով որ ո՛չ մէկ վարպետ ու «հմտալից» զգուշաւորութեան կը գիշտանին յեղափոխականները, եւ՝ պայքարի ու մաքառումի կուտանի մը վրայ գրած իրենց գործունէութիւնը՝ գիւրգազածութիւններ ու ինքնագոհ տիմարութիւններ վերաբարելէ, նախապաշարութեան ու հնաւանդ ունակութիւններ խրաչեցնելէ բնա՛ւ չեն օարսափիր:

Յեղափոխական պարտաճանաչութեան մեր այս անհաշտելի յղացումը բարոյական մեծ ու անբնկճելի ուժ մը կ'ուտայ անշուշտ մեզի, ուժ մը որ մեր հոգին կ'ամբարցնէ, կը սպառազինէ ստութեան, վատութեան ու զրպարտութեան բոլոր ցեխարձակումներուն ու բոլոր միջին ու պահուրտող դաւադրութիւններուն զէմ, ուժ մը որ պիտի պակսի յասետ՝ ամէն բան— ու յազգային ճակատադիրը մանաւանդ— իրենց սնանակական ախորժակներուն ու ախտաւոր եսականութեան տեսակէտէն միայն նկատող մեր ժողովուրդի ախոյեաններուն: Մենք Գաղափարի մը համար ուղղամտօրէն ու անձնուիրաբար մաքառած ըլլալու գերագոյն երջանկութիւնը պիտի կըրնանք վայելել զոնէ անհատապէս: Անոնք, երբ՝ ուրանալէ, զրպարտելէ, օտելէ ու մատնելէ կշտացած՝ միակ դառնան տուններին՝ իրենց հոգիին հետ զէմ յանգիման, իրենց հանուած կոշիկներուն առջեւ զլսիկոր՝ իրենց անկարողութեան, իրենց վիթխարի պզտիկութեան ու անօսածման օտորնութեան ինքնաշարժար ու թունաւոր տենղը պիտի ապրին:



—Վարպետութեամբ պէտք է շարժիլ... ասելի բառ մը երբեմն ահագին փառ կուտայ գործին... պէտք եղած ատենը լռել, աչք գոցել, հաւանիլ, խոնարհիլ, ստել զիտնալու է...

Ահա՛ փառաւոր դաւանանքը մեր ժողովուրդի ախոյեաններուն, ահա՛ ինչ որ «կեանքի գիտութիւնը» կ'անուանեն տեսակ մը մարդիկ, որոնց կեանքը շեղակոյտ մըն է ապականութեան, ահա՛ ինչ որ երբեմն չեն քաշուիր կամացուկ մը մեր ականջն ի վար մըմջելէ բարեացակամ ձայներ...:

Չէ՛, մենք չենք ուզեր համակերպիլ այդ պոռնիկ վարպետութեան, մենք ժողովուրդը խաբխրելու, լուրջելու

ընդունակ ու յօժարող մարդիկներ չենք հոս: Մենք Յեղափոխութեան յեղափոխականներն պիտի հետապնդինք, ինչ որ ալ ըլլան խոչընդոտները, որոնց զարնուինք մեր ճամբուն վրայ: Անոնք որ համոզուած, գիտակցութեամբ ու երախտագիտութեամբ չեն բերեր Յեղափոխական Կոմիտէն իրենց զոհողութիւնները, օժանդակութիւններն ու աջակցութիւնը՝ թո՛ղ տեղերնին նստին, թո՛ղ ուրիշ գուռ զարնեն: Մենք չէ որ իրենց թեկն պիտի բռնէինք: Յեղափոխութիւնը ողորմութեան պէտք չունի:

* * *

Ժողովուրդին ախոյեանները՝ յանկարծակիի եկած, զգետնած մեր այս աններող ու «անխոհեմ» դիրքին առջեւ՝ միջոց մը, ելք մը փնտռել կը փութան իրենց ա՛լ շատ վրան բաց անիմաստութիւնը արդարացնելու: Եւ ուրիշ Ի՛նչ կրնային գտնել մեզի գէ՛մ առարկելու, եթէ ոչ ձիշտ հակասակը իրենց երէկուան յաղթական փաստին: Նայեցէ՛ք մէյ մը չորսդինիդ: Կուրծքերնին բացած ու երեսնին զայթակղական ծամածոութիւններով ճմլթկած՝ ժողովուրդին ախոյեանները, ամէն կողմէ, ժողովուրդին պաշտպանութեանը կը վազեն կոր...

— Ժողովուրդը... ժողովուրդը... կը նախատէք կոր ժողովուրդը... Ի՛նչ իրաւունք ունիք նախատելու ժողովուրդը... ժողովուրդը... ժողովուրդին օգուտը... ժողովուրդին բռնաբարուած իրաւունքները... ժողովուրդին շահերը...

Ու մտեցին ու մուրացկան դարպաս մըն է կ'ընեն ժողովուրդին, անոր չորողին կը քօկոտուին, անոր առջև կը խպլիկնան ու ամէն տափակութեան կը հաւանին, ամէն ստորնութիւն կ'ընդունին անոր մէկ ակնարկին արժանանալու պապուկ յոյսովը: Ի զո՛ր սակայն: Ժողովուրդը, յեղափոխական ժողովուրդը — միակը, կենդանին, որովհետեւ անտարբերներու ու չէզոքներու ստուար ամբողջ՝ անտարբերութեան ու չէզոքութեան փառաբանումին, աստուածացումին անգամ մտիկ չընեն — ապրող, զգացող, յեղափոխական ժողովուրդը կարեկցութեան... Ի՛նչ կ'ըսեմ, արհամարհանքի նայուածք մը իսկ կը զլանայ շնորհել իրենց: Կ'երևակայէք հարկաւ ժողովուրդի այս փառաւոր ախոյեաններուն կատաղութիւնը: Իրաւունք չունինք սակայն թքնելու այսօր իրենց երեսին միևնոյն մեղադրանքը, որով անոնք օտորնացնել կը փորձէին երէկ յեղափոխականները:

— Տէ՛մակօկնե՛ր...

Բայց տխուր տէ՛մակօկնե՛ր, որոնց հետեօղ, որոնց մտիկ ընող իսկ չի կայ:

* * *

Ահաւասիկ մեր ժողովուրդի ախոյեանները: Ի՛նչ է ասոնց որոշ դիրքը Հայ Յեղափոխութեան հանդէպ: Եթէ

իրենցմէ կը սպասէք այս հարցումին պատասխանը՝ երբէ՛ք չպիտի կրնաք վերջնական կարծիք մը գոյացնել:

Յեղափոխութեան դէ՛մ չեն խօսիր անոնք բացէ ի բաց: Ընդհակառակը: Անոնցմէ ոմանք ինքզինքնին կը հռչակեն իբրև միակ ու ճշմարիտ յեղափոխականները: Կան որ նոյնիսկ յեղափոխութիւնը քարոզելու, յեղափոխութիւնը յեղափոխականներուն սորվեցնելու յաւակնութեամբ ճամբայ կ'ելլեն և զեռ հազիւ քայլ մը առած՝ երբ կը տեսնեն որ այդպէսով սպասուած ու ցանկացուած ուշադրութիւնը չգարձներ իրենց ժողովուրդը՝ յանկարծ ճամբանին կը փոխեն, զմայլելի դիւրութեամբ մը, ու՝ զեռ ընդվզումին երգը շրթներնուն վրայ՝ Յեղափոխութիւնը քանդելու ցաւագին ու ճղճիմ փորձեր կ'ընեն:

Ամէն միջոց աղէկ ու ընդունելի է իրենց համար, կը բաւէ որ ձեռնտու ըլլայ իրենց ժողովրդականութիւնը ապահովելու և ծառայէ իրենց շիլ դիտումներուն: Այսօր ժողովուրդին զգայուն ու գիտակից տարրը յեղափոխական է: Ասոր լաւ մը համոզուած են մեր ախոյեանները, ու անմիջապէս Յեղափոխութեան բարեկամ, նոյն իսկ կարմիր յեղափոխական կը ձեւանան, յեղափոխական բրօքականա ընելու կ'ելլեն, աւելի շուտ յօտենալու, վժտահութիւն ներշնչելու համար ժողովուրդին, որպէս զի յաջողին զայն, յետոյ, աւելի դիւրաւ թունաւորել, աւելի հիմնապէս քայքայել անոր յեղափոխական հաւատքը: Յեղափոխական Գաղափարին երկիւղած պաշտամունքը կը դաւանին աջ ու ձախ: Հարցուցէ՛ք մէյ մը իրեից թէ ի՛նչու չեն միանար յեղափոխական գործող մարմիններու: Օ՛ր ատոր պատասխանը չէր որ պիտի շփոթէր դիրենք: Ո՛ր մէկը կ'ուզէք, ո՛ր մէկ հանդիսաւոր սօփօտուութիւնը, ո՛ր մէկ յաղթական ենօսմիթքն: Աս կ'ըսէ. — «Ազգային յեղափոխական մարմին չի կայ». ան կը պատգամէ. — «Կուսակցութիւն մէկ հաւա կ'ըլլայ». ուրիշ մը կը հառաչէ. — «Միացէ՛ք, եղբայր, որ մենք ալ միանանք...» և այլն, և այլն:

Բայց ամենքն ալ անհունօրէն պատրաստ են Հայ Յեղափոխութեան դէկը ձեռուրնին տանելու, եթէ ո՛ր և է յեղափոխական կուսակցութիւն մը զիջանի հրաւիրել իրենց ոչնչութիւնները, իբրև վարիչ ու պետ իր կազմակերպութեան: Երկրորդ կարգի դերերը չեն սիրեր, առաջին կարգի դերերը ընդունելու ոտքով — զլխով պիտի նետուէին, բայց զլուսնին պարապ է ու ոտքերնին վտանգէն ու Կոմիտէն փախչելու ու վայելքին ճամբէն քաշելու միայն կարող:

* * *

Ժողովուրդին ախոյեանները՝ ասոնք, որոնց ամբողջ գերազանցութիւնը, ամբողջ բարեկամեցողութիւնը, ամբողջ ինքնատուութիւնը ժողովուրդը շահագործելու անարգ մտադրութեան, կամ անոր աչքին երևնալու, անոր երախտագէտ ու զգուսկան ուշադրութիւնը վայելի.

լու ուսմիկ մտահոգութեան մէջ կը կայանայ: Անձն-
ւիրութեան անկարող, տաղանդէ բոլորովին զօրկ' կ'ու-
զեն անպատճառ ժողովուրդին առաջնորդները նկատ-
ուիլ, ու կը պաշարեն զայն հազար կեղծաւոր կոտոր-
արուցներով, անոր կոնակը կը փայփայեն ծառայական
ստորնութիւններով, խանդաղատանքի ու պաշտպանու-
թեան խօսքեր կ'ընեն անոր ու երանութեան խոստում-
ներ կը փոփսան անոր ականջն ի վար. 7. եթէ զիրենց
մտիկ ընէ:

Չէ՛, ժողովուրդի բարեկամներ չեն անոնք, որ իր
շուրջը կը փութկոտին, իր առջին կը բծնին, որ իր
տկարութիւնները կը շոյեն, իր թերացումները կը լռեն,
իր յեղափոխական անպարտաճանաչութիւնը կը քաշա-
լերեն: Ժողովուրդի ախոյեաններ չեն անոնք, որ՝ ժո-
ղովուրդին շուարումի ու անգիտակցութեան մէկ վայր-
կեանէն օգտուելով՝ կը նկրտին զայն դարձնել իր ճա-
կատագրէն, անոր անտարբերութիւններն ու ուրացումները
կ'արդարացնեն, կը վաւերացնեն, կը նուիրագործեն, այլ
անոնք՝ որ իր թմրութիւնը կը ցնցեն, իր նախապա-
շարուածներուն, իր բարոյական այլասերումին, իր ան-
կամներուն ու վատութիւններուն դէմ անողք պայքարը
կը ժղին ու ժշմարտութիւնը, ո՛րքան ալ որ ծանր ըլլայ
ան, իր երեսն ի վեր պոռայու քաջութիւնը կ'ունենան,
իր սխալ ըմբռնումները, իր նուիրական համարած ստու-
թիւնները քանդելէ, իր պղտաւոր պաշտամունքները,
իր մահացու կուրքերը խորատակելէ չեն վախնար: Ասոնք
եղած են ժողովուրդին միակ ու ճշմարիտ բարեկա-
մները, մարդկութեան վերանորոգիչները ու ասոնք միշտ
խանդավառութեամբ ու երախտագիտութեամբ չեն պա-
շարուած իրենց գործունէութեան ճամբուն վրայ. ընդ-
հակառակը, անոնց ծունկերը պատռուած, արիւնած
են իսկալին Գողգոթաներուն վրայ ու անոնց համար
լաստակերտուած, ցցուած է՝ եղբրական հորիզոններուն
առջեւ՝ կառափնատներու և կախաղաններու թևատարած
ու շարաշուք կմախքը:

Յեղափոխականները ո՛չ միայն պարտականութիւնը,
այլ և իրաւունքն ունին խօսելու ժողովուրդին զանա-
ցած ու դաժան շեշտերով, որովհետեւ՝ հակառակ անոնց
որ «ժողովուրդ, ժողովուրդ» կը պոսան շարունակ ու
կը զգուշանան անոր համար փշուր մը զսկզելու իրենց
անձնական բարօրութենէն՝ յեղափոխականներն են նորէն,
որ ժողովուրդին համար իրենց կեանքն ու իրենց արիւնը
զօհեցին, կը զսկեն ու պիտի զսկեն...:

ԱՍՊՍՏԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Դ.

ԿՏՐԻՃՆԵՐՈՒ ՏԱՐՓՈՒՈՐԸ

Գուրշունչուի հարաւ-արևելքի գիւղերը տեօակ մը
անզուտ պ ուրախութեան մասնուած էին 1890, սեպտեմ-
բերի սկիզբները: Մարթիլէն մինչե Զախմախ, Ահալըէն
մինչե Էլրի-Տէրէ հայ տուն չէր մնացած, ուր Մինասեան
սօսպատակային խումբին ներկայութեան շուրջ թափան-
ցած չըլլար: Կնիկ ու էրիկմարդ ու թուշերին աղուա-
մաղով հազիւ առնացած պատանիներ, որոնք հերոսա-
կան հեքեաթներով կը սնանէին, հետաքրքրութենէ աչ-
ուընին պաղած՝ ու եռուեփ սրտերով, հայ կտրիճներուն
վրայ ականարկ մը ձգելու կարօտէն կը մաշէին: Ամէն
կողմ լուր տարածուած էր թէ խումբը՝ աննպատ պա-
րագաներէ հարկադրուած՝ կարճ ժամանակի մը համար
պիտի հեռանար իր սիրական լեռներէն: Լօղմանի եւ
Կիւչիկ Հասանի սարօափը երթալով աւելի կ'արմատանար
զիւղացիներուն մէջ ու անոնք կը զգային թէ իրենց
վրայ պահապան հրեշտակներու պաշտօն կատարող քա-
ջերուն մեկնուած թշուառ ու սև օրերու վերապարճը կը
սպաննար:

Քանի մը ամիսներէ ի վեր, ասպատակները, իրենց
պայծառական երգիքներուն տակ, ընսանիքով ու զաւ-
կըններով շրջապատուած հանդիսներու ու կազմուրդ օր
մը անցնելու պատեհութիւնը չէին ունեցած: Աւ իրենց
գեղջուկ հարոնները, որոնք ամուսիններնուն զգուանքէն
մշտապէս զրկուած կը համարէին ինքզինքնին, գոհ
պիտի մնային, եթէ անոնց հետ նայուածքներու հան-
դիպում մը, քանի մը խօսքերու փոխանակութիւն մը
ունենալու առիթը գտնէին: Անոնք արիաբար համա-
կերպեր էին իրենց բռնադատեալ այրեացումին ու իրենց
բացակայ էրիկներուն զիւցազնական արարքներովը հը-
պարտ՝ անոնց փոքրիկ կորիւնները բազուկներնուն մէջ
առած՝ կտրիճի երգերով կը քնացնէին զանոնք ու՝
իրենց առոյգ ծիծերուն հարազատ կաթին հետ՝ վրէժ-
խընդրութեան ու կոիւի հուրը կը շամբէին անոնց կա-
կուղ միտին ու ոսկորներուն:

Չէրքէզի ճարպիկութեան շնորհիւ, թէ՛ զիւղացիները
և թէ՛ ասպատակները իմացած էին թէ Լօղման ու Կիւչիկ
Հասան, հեծեալ ոստիկաններով միասին, զիմացը,

Չաթախ անցած էին, հոն հայ ասպատակներուն հան-
դիպելու յոյսով: Լաւ պատեհութիւն մըն էր աս, աս-
պատակներուն համար, հետեւապէս պէտք էր օգտուիլ
անկէ: Ամէն կանխազգուշութիւնները ձեռք անուած էին
արգէն ու ամէն պատրաստութիւնները տեսնուած՝ Ուստա
Մակարի տան մօտ, նոր շինուած մարապներու մէջ,
ընտանեկան հաւաքում մը օարքելու, ու կնիկ ու էրիկ
մարդ, պզտիկներն ալ մէկտեղ, կէսօրէն առաջ հոն
պիտի գտնուէին:

Արեւածաղին, ասպատակները՝ մարապին կից տա-
րածուող անտառին մէջ ծածկուած՝ ակնզէտ Չէրքէզի վե-
րադարձին կըստաւէին: Գիշերն ի բուն անքուն՝ անոնք թափ-
ուած տերեւներու վրայ կողմնակի երկնցած կը քրտնէին:
Պահակները աւելի հեռուններն էին դացեր իրենց պաշ-
տօնը կատարելու: Մինասն էր միայն, որ ո՛չ հանգիստի
պէտքը կը զգար, ո՛չ ալ քունի: Չէնքը կուրծքին կըռ-
թընցուցած ու ճակատը իր երկու ափերուն մէջ՝ խո-
րունկ մտածութեան մը տուեր էր ինքզինքը: Իր միտքը
անցեալին հետաւոր ու փախչող խորունկները կը մխրձէր
ու օրոյ օրերու վերջուշուններ հետզհետէ անօր առջեւ
կը պատկերանային: Արկածայից կեանք մըն էր եղած
իրը, ամէն տեսակէտով: Խորխտ ու ապօտամբ ծնած՝
իր մանկութիւնը, իր պատանութիւնը կոիւններու շարք
մը կը ներկայացնէին: Գիւղին առաջին հրացանաձիգը,
առաջին օրօօրդը, առաջին անկախ երիտասարդն էր
ան: Ո՛չ մէկ կամքի հպատակելու, ո՛չ մէկ բռնութեան
առջեւ տեղի տալու, ո՛չ մէկ օպտոնալիքի տակ հա-
մակերպելու տրամադրութիւն ցոյց կուտար ան: Իրեն հա-
մար իշխող ուժ մը գոյութիւն չունէր, թիւրքին պաշ-
տօնական լեզուն չէր հասկնար եւ՝ եթէ բռնադատէին՝
զէնքը վեր կ'առնէր, առանց վայրկեան մը վարանելու,
առանց ո՛ր է հետեանքի մտահագութենէն ընկրկելու, ա-
ռանց ժամանակ իսկ ձգելու իր ոսոխին ներօրութիւն
խնդրելու իրմէն: Կառավարութիւնը՝ անօր խոտմայոյզ
արբերքներէն միանգամ ընդ միշտ ազատելու համար՝
ոտտիկան զինուոր գրած էր զայն, երբ զեօ Հայութիւնը
իր զուխը խաչաձեւ ծալած ձեռքերուն վրայ հակած՝
ստրկական թանձր քունը կը խորդար: Աւազակները
Մինասի նայուածքին առջեւ քարացած կը մնային ու
փախչելու յանդգնողները անօր անվերայ գնդակէն թա-
ւալղոր կը տապալէին: Մինաս, երբ՝ յաղթական՝ գեղը
կը մտնէր քանի մը շղթայուած աւազակներ իր առջին
ձգած՝ զիւղին աղջիկները, պուրակներու մէջէն, կամ
ապառաժներու ձեռքերուն դօզը կ'ծկտած՝ հեւացող շըն-
չառութեամբ մը, անօր սիգաճեմ քալուածքը կը դիտէին:
Մինասի ջինար հասակը, նուրբ ու ճկուն կազմուածքը,
սե օթի նման փայլուն ու ուրբուն պիտերը այդ հար-
սընցուններուն կուրծքին տակ օրոյ հրայրքը արթնցնելու
հերիք էին: Ամենքն ալ Մինասը իրենց կեանքի անբա-
ժան ընկերը ունենալու բուն տենչանքովը կը տապ-

կուէին: Մինասն ալ, իր կողմէն, անզգայ չէր մնար
այդ սիրոյ անդիմադրելի փերձութիւններուն, իր հզօր
արուի սիրտը կ'ուռէր ու իր կամար յօնքերուն տակ
ծածկուած արծիւի աչուրները մէկէն միտին վրայ կը
հանգչէին հրավառ ու լկող նայուածքներով:

Սիրոյ կրկէօին մէջ ալ մրցանակը արիաբար կըռ-
ուողին կը մնայ: Լուսեան այդ կոռօղներէն էր: Գե-
ղեցիկ չէր սեպուեր ան, օակայն զիւղին աղջիկներուն
էն համարձակը կը նկատուէր: Իր պզտիկութենէն սկսած՝
օր չէր ըլլար որ Մինասին չհանդիպէր: Անուական սրտի
մը մէջ կանացի էն փափուկ զգացումները կը սնուցանէր
Լուսեան: Երբ Մինաս զիւղին աղաքները մէկիկ մէկիկ
կը զգեսնէր, ինքը՝ աղբուրին զլիւն կանգուն՝ օքան-
չացումով յափշտակուած աչքերը կը սեւեւէր անօր վրայ,
զայն ամբողջութեամբ իր մէջ ձուլելու, անկացնելու խօլ
ցնորքէն բռնուած: Խանդավառ հիացումէն վերջը, սէրն
էր որ յանկարծ սկսեր էր ընձիւղիլ Լուսեայի սրտին
մէջ: Մինաս իր կեանքին էն երջանիկ բուպէն վայրի
զղեարներու հանգրիճաձեւ ծառերուն տակ անցուցեր
էր, երբ Լուսեան, վայրի աղջիկը, իր թուշը քաջին
պոկունքներուն երկնցուցեր, զարկեր էր առաջին համ-
բոլը տալու: Ա՛լ անկից վերջ, երկուքն ալ իրարմով հը-
մայուած՝ չէին կրցեր առանձին ապրիլ: Բայց ծնուա-
կան ձեռքերը, արեւելեան սիրագուօպ բարբարոսութեամբ,
բաժնեք էին զանոնք իրարմէ: Օրին մէկն ալ Մինաս
ինքզինքը նշանուած գտեր էր յանկարծ: Մտողական կամ-
քին զէմ գնելը էն մահացու մեղքն էր: Եւ Մինասի ան-
նուած կամքը՝ հեզ ու խոնարհ գառնուիկ համակեր-
պութեամբ մը՝ տեղի տուեր էր այդ կատարուած իրօ-
ղութեան առջեւ: Ատիկա իր կեանքին առաջին ու վեր-
ջին հպատակութիւնը կը նկատէր Մինաս:

Այդ օրէն ի վեր, Լուսեան՝ խելագարի նման՝ սկսեր
էր վազել այն ամէն երիտասարդի ետեւէն, որուն մէջ ինք-
նուորոյնութեան, կտրճութեան նշան մը տեսնէր: Ա՛լ ա-
նորն էր Լուսեան, գոնէ գիշեր մը, արշալոյս մը, վայր-
կեան մը: Պոռնիկը կ'անուանէին զայն գեղին մէջ, բայց
քաջերը միայն կ'արժանանային անօր ակնարկին, անօր
համբոյրին:

Մինաս սիրած էր այդ կնիկը, իր մանկութեան մէջ
իրբե խաղի ընկեր, իր երիտասարդութեանը՝ իրբե կեանքի
ընկեր: Ու հիմա, ամէն անգամ որ ան՝ զէնքին ծան-
րութեանը տակ պարտասած՝ կը տքար, Լուսեան տես-
նել կը կարծէր, Լուսեան, որ իր բաժնի վեր կը քսկտուէր,
անասակ ու յայրատ ծիծաղով մը կը խնդար, ու անօր՝
քամիէն տարուբեր՝ ցրուած մագերուն հպումը կը զգար
երեսին վրայ՝ սիրուած ու փախցուած էգին յեղակարծ
վերջուշունէն մոլուցքի մէջ ինկող վայրի արուն: Այն ա-
տեն շլապինդ օտքի կ'ելլէր Մինաս և իր տկարութենէն
ամօթահար՝ գաղտագողի նայուածք մը կը ձգէր շուրջը
ու կը նետուէր, կը վազէր զիպի անօտհաման ու բարե-

բար կազդորումները ազատ ու խաղաղ միջոցին:

Հիմա՝ գաւախներու հայր՝ իր սերը բաժան բաժան եղեր էր: Կը գորգորար իր կնոջը վրայ, թէ իր ընտրածը չէր ան: Բայց ժամանակը չէր կրցած սպիտակել այն խոշոր վերքը զոր ծնողական ձեռքերը իր որտին վրայ բացեր էին: Ու ամէն անգամ որ գիւղին կը յօտեւնար՝ հին յիշատակ մը կը ցցուէր իր ոտքերուն առջև: Կը կտոչէր իր սրունքներուն, կանց առնել կը ստիպէր զինքը: Ամէն քար, ծառ, ձորակ ու բլուր պատմութիւն մը ունէին, իւրաքանչիւրին նախնի Լուսեան կար, իր անշէջ տարփանքին մէջ միշտ պատրաստ ու սարսուղին, բազուկները դէպի իրեն կարկառած, շրթունքները իրեն երկարած, նայուածքը իրեն սեւեռած, հերարձակ ու սիրահրաւեր:

Մինաս իր ասպատակային խումբովը, լեռը քաշուելէն ի վեր, թիրք կառավարութեան օտարական-զինուորներէն աւելի կին մըն էր որ անոր կը հետևէր, կը հետապնդէր: Խումբին իւրաքանչիւր օթեւանին ծանօթ էր ան: Քարայրները, անտառի խիտ պուրակները, փոքրիկ գոգահովիտները, որոնք խումբին ապաստանարաններ կ'ընծայէին, գաղտնիք մը չունէին անոր համար: Պահակներէն զատ՝ ասպատակներու իշխանին շուրջը կը թափառէր կին մը, յուշկապարակի նման մերթ երևան գալով և մերթ աներևութանալով, ու շատ հեղ պահակներէն աւելի՝ ան էր որ վտանգի սուղոցը կը փչէր, ու պահակներն ու ասպատակները անձանօթ նախախնամութեան մը կը վերադարձին այդ ազգարար ձայնը:

Կը պատահէր յաճախ որ խումբը՝ օրերով հալածական՝ պաշարի պէտք կ'ունենար, ու երբ, թաքցողոցի մը խորը, ասպատակները անօթութենէ զեղնած ու պրկուած՝ իրենց աղիքներուն գալարումէն կը տառապէին ու չոր ու ցամաք հացի կարօտը կը քաշէին, յանկարծ իրենց առջին ծրար մը կը նետուէր որուն մէջ հացէն զատ, միտ ու պանիր ալ կը գտնուէին: Ասպատակները շատ ջանքեր ըրած էին այդ անձանօթ ու մայրական նախախնամութիւնը ձանչնալու, բռնելու այդ խնամօտ ու ջերմեանդ ձեռքը, որ այնքան դժնդակ վայրկեաններու օգնութեան հատեր էր իրենց, առանց անգամ մը երեւալու անոնց աչքին: Բայց իրենց այդ փափաքը չէին կրցեր երբէք գոհացնել: Չէին գիտեր թէ կ'ո՞ղ մը յանդրգնութեան ու անձնութեան կը պարտէին իրենց անսուազ մեռնելէ ազատումը: Խումբէն երկու հոգի միտայն կրցեր էին այդ գաղտնիքը լուծել, առանց սակայն միաներուն հազորդելու: Մէկը Մինաս ինքն էր, իսկ միւրը Չէրքէզը:

Ատանկ պարագաներու մէջ Մինասը հազիւ հազ քանի մը պատու կու տալու կարող կ'ըլլար: Լուսեայի բերած հացին պատասնները իր կուրծքին տակ կը շափուէին գնդակներու պէս, առանց վար իջնելու: Բայց

այդ տարօրինակ կնկան համար իր ու՛ եցած տարփանքն ու յափշտակութիւնը երթալով կը բազմապատկուէին առանց դէպի իր սեփական կինը աւածած սերը նուազեցնելու: Բուռն ու անդիմադրելի ըղձանքով մը կ'ուզէր այդ վայրենի վհուկին հանդիպիլ, զայն իր հուժկութեան մէջ սեղմել, նուաճել, համբոյրով մը անոր շրթունքները արիւնել: Մինաս ոչ միայն իբրև կին կը սիրէր Լուսեան, այլ իբրև կտրիճ ու խնամօտ քոյր մը, յանդուգն ու անվեհեր արարած մը, որ անկարելիութեան մէջէն ճամբաներ բանալու գաղտնիքին տիրացած ու իր անձնութեամբը խումբին գոյութեան ըսպասանացող վտանգները քանիցս հեռացուցած էր:

Այսօր նորէն գիւղին եզերքն էր Մինասը, ու՛ տեսակ մը վախի ենթարկուած՝ ամէն խշրտոցէ, մողեսի մը խլրտումէն, օձի մը գալարումէն, թռչուններու թեւահարութենէն ու տերևներու սոռափիւնէն ընդօրոտ ցատքելու փորձութիւնը կ'ունենար: Գիտէր թէ Լուսեային վրիպել անհնար էր. ամէն վայրկեան կրնար քարի մը ետեւէն, թուփի մը տակէն զուր խոյանալ ու իր դէմը անկուիլ: Ժամանակը չէր կրցած այդ աղջկան ապերաստան տարփոտութիւնը սպասել, զայն լրջացնել, միշտ երիտասարդ կը մնար ան, վառվռուտ ու թեթեւօտ:

Բոլոր էութեամբը պրկուած իր մտածութիւններուն մէջ՝ Մինաս քանի մը անգամ փախչելու կամէութիւններ ունեցաւ: Լուսեային երևումը անոր սիրտը թունդ հանելու հերիք էր, հոն առանձին խորշ մը կար, ուր այդ գիւղային աղջկան յիշատակը կնքուած կը պահէր: Երբեք անոր մտածնքի պէս բան մըն էր աս իր ներսիդին ու պզտիկ վերջուշում մը զինքը տակնուվրայ կ'ընէր, այնպէս որ, շատ անգամ, իր մէջ զգացումի յեղափոխութենէ մը կը վախնար:

Կէս ցուն կէտ արթուն՝ ցնորածի պէս բան մըն էր Մինասը, իր լայն բացուած աչքերը արիւնով լեցուեր էին: Իր շուրջը բան մը չէր տեսներ, բան մը չէր լսեր, իր ընկերներուն ներկայութիւնը, անոնց խոսքոտ խօշորտնէրը իրեն համար գոյութիւն չունէին կարծես: Լուսեային յաճախանքն էր, որ իր կուրծքին վրայ երկաթի պէս կը ծանրանար, ու Մինաս իր սրտին սաստիկ փափախումը հազիւ զօգտելով՝ իր կաշմբուսն բազուկները Լուսեայի ուրուականին կը դնէր երբեմն ու զայն ետ մղել կը ջանար:

Այսպէս իր կեցած տեղը արձանացած, մտածելով՝ իր անցեալի խոռոչներովը կը տուայտէր Մինաս, երբ անտառին անձեղները, ահաղին աղմուկով մը, զայն յանկարծ սթափեցին, ու անձեղը վտանգի նախաձայնողն է միշտ անտառին մէջ: Չէնքը ձեռքին՝ Մինաս ոտքի ելաւ ու քանի մը քայլ յառաջանալով սկսաւ ուշադրութեամբ իր շուրջը դիտել: Հեռուն, անտառին ծառերուն թանձրախուսն խոտութեան մէջ ստուեր մը նշմարել

կարծեց, ու իր սուր աչքերէն չվրիպեցաւ Լուսեայի զէմբը: Ան էր: Կասկածիլ չէր ըլլար: Հեռուններէն եկած էր նորէն Մինասին ու իր քաջերու խումբին գոյու- թիւնը ստուգելու, անոնց վրայ հիանալու, անոնց տես- քովը արբենալու: Եւ իր այրող, մորմոքող սրտին գէթ առժամեայ գոհացում մը տալու:

Առաջին տեսքին Մինասի մէջ կատաղութեան պէս բան մը առաջ եկաւ: Գնդակ մը սեղեցւոյ շարժելու պէս Լուսեայի սիրտը միանգամ ընդ միշտ ազատելու համար անկէ: Բայց զգաց թէ իր կեանքին ամենաստոր արարքը պիտի ըլլար այդ, ու՛ տկար կնկան մը դիակին առ- ջեւ՝ աշխարհ արարատ իր երեսն ի վեր պիտի պոռար իր վառ ու վախկոտ արարքը: Քնացող կտրիճներուն շուրջը պատիկ շրջան մը ըրաւ հեռաքննին ակնարկ- ներ ձգելով անոնց իւրաքանչիւրին զէմբին վրայ: Ա- նոնց քունը խոսովոյ պատիկ օտարու մը իսկ չէր անցնէր անտառին մէջ: Նախանձի պէս բան մը անցաւ իր մտքէն: Չէ՞ մի որ ատոնց ալ սիրած էին, անոնց ալ սիրած՝ տարփանքով լեցուն՝ յաճախ կանգ առած էր կնկան մը առջեւ ու իր տկարութիւնը խոստովա- նած: Ինչու՞ այդ պահուն՝ վեր չէին թոքեր ու ան- տառին մէջ պահուրտելու փորձին ենթարկուեր: Քանի՞ քանի՞ անգամներ մտքէն անցաւ վտանգին սուրճը փը- չել ու ամէնը մէկանց ոտքի հանել: Սակայն ինչ պիտի ըսէին անոնք, չէ՞ որ խնդրեցածի տեղ պիտի դնէին զինքը: Ասկէ զատ ինքը՝ իբր խմբագրի՞ անոնց վրայ եղբոր պէս կը գուրգուրար, անոնց հանգստու- թիւնը իրն էր, ու անոնցմէ մէկին հիւանդութիւնը ինքը աւելի կը զգար: Պէտք էր որ քնանային անոնք, սրով: Հետեւ զիտէր թէ զէմբէն յետոյ քունը օտարակիցին էն կենսական պէտքերէն մէկն էր:

Մինասը իր այս մտքի զանգաշութեան մէջ զգաց որ մէկը կը ձօնենար: Իր օտարակցի ակնաշնորհ սրեց եւ երեօթի վրայ ինչպիսի քանի մը անգամ գետինը մտիկ ըրաւ: Արագավազ ոտքի մը քաշուածքը լսեց: Անպատ- ճառ Չերքէզը ըլլալու էր, որովհետեւ պահակները ձայն չէին տուած:

Հազիւ քանի մը բոպէ անցած՝ թուփերու մէջէն սողոկելով երեսն եկաւ Չերքէզը: Անոր երեսուր՝ այդ պահուն՝ Մինասի փրկութիւնն էր կարծես: Դէպի Չեր- քէզը վազեց ան և՛ մտքը շրթունքին վրայ դնելով՝ ձախ ձեռքով Լուսեային կողմը ցոյց տուաւ:

— Ան է, ըսաւ Չերքէզը ցած ձայնով, իենթեցածի պէս այդ կողմերը կը թափառի:

Չերքէզը ամբողջութեամբ զիտէր Մինասի անցեալին այդ զրուազը, ու անոր սիրոյ յարաբերութիւններուն մէջ յաճախ միջնորդի դեր կատարած էր: Լուսեան ալ կը ճանչնար: Իր արկածալի ու յանդուգն ձեռնարկ- ներուն մէջ՝ Լուսեայի օգնութեան պէտքը ունեցեր էր ու միշտ օգտուած էր անկէ: Սէրը կոյր անձնուիրու-

թեամբ լեցուցած էր այդ կանացի սիրտը, ու Մինասը իրեններով պաշտելի սուրբեր էին գարձած անոր:

— Անորմէ բնաւ ազատելիք չունիմ, փոփոսաց Մինասը:

— Տէր մի՛ արասցէ որ ազատես, ըսաւ Չերքէզը լրջութեամբ, քննէ վերջը մեր խումբին հոգին է ան:

— Սակայն հո՞ս... ըսաւ Մինասը ձեռքը կուրծքին դնելով, անոր երեսուր միշտ սոսկալի հրգեհ մը կը բռնկեցնէ այստեղ: Ես եմ միայն որ այդ լափող բացերուն ներսիցիս խանձելը կը զգամ: Եթէ օտարակցին կեանքի հաճոյքն ալ չըլլար՝ աշխարհի է՛ն թշուառ արա- բածը պիտի համարէի ինքզինքս...

— Գուն նորէն հաճոյք մը ունիս, միջամտեց Չերքէզը, հապա ա՛ն, որ իր ամբողջ հաճոյքը թափա- ռական կեանքի մը մէջ կը փնտռէ ու խումբին հա- մար վտանգէ վտանգ նետուելով մխիթարուիլ կ'ե- բարգէ:

— Այս վիճակը, Չերքէզ, անհրաժեշտ է որ վերջ մը գտնէ, վճռողաբար շեշտեց Մինասը իր հրացանի բունը գետնին զարնելով:

Չերքէզը պատասխանելու վրայ էր, երբ յանկարծ խոշոր ծրար մը ծառերու ճիւղերուն մէջէն օստէ օստ զարնուելով աղմուկով մը երկու կտրիճներուն ոտքին առջեւ ինկաւ:

Մինաս ու Չերքէզ մէկ մէկ քայլ զէպի ետ նետ- ուեցան, առպատակի բնազդով ձեռքերնին զէնքերնուն վրայ դրած, յետոյ ապշած իրարու երես նայեցան: Աղմուկը քնացող կտրիճներու մէկ քանիին ալ հանգիստը խանգարեց, անոնք ընդոտ վեր թռան մարթինուն պլլուած, քնաթափախ աչքերով իրենց շուրջը դի- տեցին, Մինասի ու Չերքէզի ներկայութիւնը ապա- հովցուց զիրենք ու նորէն իրենց զուլիւր քարէ բար- ձերնուն երկնցուցին խորգալու համար:

Փոքր վարանու մէ մը վերջ, Մինաս ու Չերքէզ, ծը- բարին քով վազեցին, արտորնօք մը զայն բանալով՝ երկուքն ալ քար կտրած սկսան իրարու երես նայիլ: Քանի մը օխա վառօղ իրենց առջեւ զիգուած էր սեծ լաթի կտորի մը մէջ: Չերքէզը իր աչքերուն չհաւ- տալով կրկին ու կրկին խառնեց այդ զէզը: Քանի մը վայրկեան մտախոհ օպասելէ վերջ, սարսուռ մը անցաւ Չերքէզի ամբողջ մարմնոյն մէջ ու անոր արեւն այրած զէմբը գունատեցաւ:

— Անհնար է, կը մտածէր ան ինքնիրեն, կին մը այդքան զոհողութիւններու չզիջանիր: Եւ սակայն ի- րականութիւնը իր առջեւն էր և վառօղի սև զէզը իր ձեռքին տակ կը բարձրանար և անոր հատիկները իր մասներով կը շօշափէր:

— Անհնար է կրկինց ան:

Բայց կասկածիլը յիմարութիւն էր և տարակոյր չկար որ ծրարը նետողը Լուսեան էր: Հիմա միայն կրցաւ քիչ շատ լուսարանել այն հանելուկը որ օրերով

իր միտքը զբաղեցուցած էր: Օրեր առաջ Լուսեան Չարչաձայա տեւած էր, որ վառարարանին շուրջը զեզերելով պահակին հետուէ հետու խօսք կը նետէր: Կերպով մը Չէրքէզէն իմացած ըլլալով խուժարին վառարի անբաւականութիւնը, առանց այլեւորութեան, Լուսեան Չարչաձայա էր վազած և շիջ մը օդի ճարելով վառարարանին դուռն էր փութացած ուր դիւրութեամբ բարեկամացեր էր պահակին հետ ու ձեռքի շիջը անոր կողորդն ի վար լեցուցեր: Օգտուելով անոր գինովութենէն՝ քանի մը օխա վառար էր ապահովեր ու Գափու Փառա վազեր: Ահա այդ վառարի ծրարի շուրջն էր, որ երկու քաջերը գամուած մնացեր էին և երկուքն ալ վտաւհօրէն գիտէին թէ այսպիսի անակնկալ հրաշք մը միայն ան կրնար ընել: Ատոր նման անակնկալներ շատ էին ու նեցեր, սակայն հաց ու ուտեստեղէն միայն կը պարունակէին Լուսեայի ծրարները: Վառարի գոյութիւնը կնկան մը տրամագրութեան տակ՝ ոչ ոք կրնար մտաբերել, մանաւանդ այնպիսի պարագաներու մէջ, երբ կառավարութիւնը հազար աչքով կը հետեւեր խուժարն ու անոնց անունները տուողն իսկ բանաթի նկուզներու մէջ տառապելու օտարօտք կը կրէր:

— Պէտք է բռնել զայն, ըսաւ Չէրքէզը իր տատամաստ վիճակէն օթափելով:

— Պէտք է բռնել և այդ կնկան առջեւ հարիւր անգամ ծնրադրել, յարեց Մինասը, որուն օրտը՝ բունն ոտտինով մը արթնցող օէրէն օկօսեր էր թունդ թունդ արօփել:

Ու երկու հերոսները, իրենց վտանգաւոր դրութիւնը մոռնալով՝ անտառին խորը մխրճեցան Լուսեային հետապնդելու և զայն բռնելու յոյսով:

(Շարունակելի)

ԳԹՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐԸ

Բ.

Եթէ՝ ազգային աղէտքներու վաղորդայինն՝ արտասահման թափող մեր վայրավատին երիտասարդութեան մէկ մասը՝ թշուառութեան ու շուարումի մատնուած՝ բարոյական տագնապներէ ու անձկութեան ցաւազին գալարուժներէ վերջ միայն անձնատուր եղաւ Գթութեան վայրագ ճիրաններուն, գտնուեցան սակայն շատեր, որոնք, առանց ո՛ր և է այլալուծի, առանց ամենադոյզն խղճահարութեան, կարծես խանդավառ փութկոտութեամբ մը ու զրեթէ համոզուած ազնիւ ու հայրենասիրական զօրծի մը մասնակցելու, աջակցելու՝ օգ-

տուեցան այն բոլոր օտար ու ազգային ձեռնտուութիւններէն, զորո Հայ Տառապանքին ահագնութիւնը հարկադրած, բնազատած էր հանդիտաւորապէս վրդովուող քաղցնի խղճմտանքներու:

Այ՛ հայերը, ընդհանրապէս, անոնցմէ չէին, որոնք իրենց բարօրութենէն ամենէն աւելի վրայ տուած էին Հայութիւնը զարնող աղէտքներուն մէջ: Իրենցմէ շատերուն համար կարծես՝ ազգային ընդհանուր սուղին մէջէն՝ անակնկալ ու փորձող բաղդի մը զոները բացուեր էին: Իրենց երկիրը արդէն նիւթական նախանձելի կեանքի մը չէր վարժեցուցած զիրենք: Յանկարծ ինքզինքնին եւրոպական կեդրոններու մեծածոր ու շրջուցել մթնոլորտին մէջ գտած—բան մը, զոր երբէք չէին համարձակած երազել իրենց անշուք գոյութեան ու ան ձուկ միջավայրին մէջ—տեսակ մը զիրին տիրացումի, անմիջական վայելումի բունն տենդէ բռնուեցան ու շիկասկածուած, յանկարծածին ախորժակներու և անըմբեր ետականութիւններու՝ իրենց մէջ արթննալ, զայրանալը զգացին: Տիրանալ, վայելել, ապրիլ, առանց տատեւու, քրտնելու, ուրիշ ինչ միջոցով, ինչ գնով որ կարելի ըլլար ան: Ու է՛ն առաջ անշուշտ պէտք էր ձեռք երկնցնէին, կամ երկննալու արամաղիր ձեռքերէ բռնէին, քաշէին:

Ու այսպէս ալ ըրին: Ամէն կողմէ հասան, վազեցին հե ի հե ու խելայեղ՝ ընդունելու, յափշտակելու, պաղատելու համար իրենց պատառը Հայ Թշուառութեան անունով շահագործող Գթութեան առատաձեռնութիւններէն: Ո՛չ մէկ առիթ ձեռքէ հանեցին, ո՛չ մէկ փշրանք փախցուցին, ո՛չ մէկ եղանակ արհամարհեցին, կը բաւէր միայն որ ծառայէր ան իրենց անիրաւ զոյութիւնները տեսելու, վայելքի վայրկեան մըն ալ հայթայթելու իրենց, առանց երբէք օտիպելու զիրենց ո՛ր և է առնական ճիգի, ո՛ր և է պարկեշտ աշխատութեան:

Ա՛լ զրեթէ աշխատելու եղանակ մը, արհեստ մը զարձաւ իրենց Գթութեան դանբըրը ափ առնելը, դիմումներ ընելը: Ու, իրա՛ւ ալ, այդ ստորնացումին մէջ այնպիսի բունն ետանդ մը, անանկ լափիլիզող գործունէութիւն մը զրին (անոնցմէ օմանք ամբողջ տոմարակալութիւն մը ու վիթխարի թղթակցութիւն մը բռնեցին, այլապէս կնճածօ ու խնամուած, քան վաճառականական տան մը հաշիւներն ու նամակները), այնչափ մտմտացին, ճարտարօրեցան, հետապնդեցան, յամառեցան, որչափ չպիտի յօգնէին թերևս ո և է խոստովանելի զօրծի մէջ:

Գոնէ՛ դուռ անվերջ պտոյտ մըն էր, զօր կ'ընէին: Հանդիպած հայ ունեւորին կամ «հայասէր» ճանչցուած օտարին զրասենեակը կը ներկայանային, շատ անգամ աղաչաւոր տափակութիւններով, երբեմն ալ արդար պահանջ մը գանձելու եկած առնելիքօրի տիրական պաղարիւնութեամբ մը:

Այս ամօթալի վիճակը երթալով ընդհանրացաւ արտասահմանի մէջ ու խոտովիչ համեմատութիւններ առնել սկսաւ: Ատիկա ընկերային մակարտուծութեան աղէտաւոր համաճարակ մը գտնուել սպասնաց ատեն մը:

Գթութեան անարգօւ շնորհքներու իրենց կեանքը քաշկռտելու վարժուած կարգ մը հայեր ա՛լ հետամուտ չէին ըլլար ո՛ր եւ է գործի, ա՛լ չէին կրնար հանգուրծել մարմնական կամ մաւաւոր աշխատութեամբ մը իրենց ապրուստը ճարելու գաղափարին: Ասոր ուղղակի հետեանքը եղաւ անհատական խաչագողութիւնը որ մակարտութեանն աւելի տեսական ու անբուժելի պիտի ըլլար արտասահմանի հայ գաղթականութիւններուն մէջ:

Գթութիւնը իր գոհերը խորապէս ամբարոյացնելէ, փճացնելէ վերջ, կամաց կամաց իր դոնորը կը գոցեր անոնց առջև: Հայ Չարչարանքին ամէնութիւնը հետզհետէ կը տկարանար, կը կորուսէր: Հարիւր հազարաւոր դիակներ պէտք էին միշտ, որպէսզի զժար Գթութիւնը:

Գթութեան գոհերը այս նոր ու սպանալից կացութեան առջև խելայեղ՝ ու անկարող աշխատութեան ուշացած այլ կտրիճ վճռութեանը՝ խաչագողութեան յանդուգն ու վտանգաւոր օրոշումը տուին:

Երբեմն արտասահմանի հայ թերթերը անոնցմէ մէկուն վերջնական խաղցութեան ու անկուսիքն ախորշուրը կուտան: Անոնք ընդհանրապէս օտար բանտերու մէջ կը վերջանան, իբրեւ հասարակ յանցաւորներ, որպէս թէ գնդան պակօեր իրենց համար իրենց հայրենիքին մէջ, որպէս թէ գաւակները չըլլային Բանտ-Երկրին: Կորսուած գոյութիւններ, որոնք՝ մերինին պէս յուսահատ մեռնողներու պէտք ունեցող ցեղի մը մէջ՝ պիտի կրնային գոնէ իրենց յանդուգն մահերովը քաւել իրենց կեանքերուն ամօթը...:



Այս ախոր բերսթին առջև գտնուեցան օրտցաւ հօգիներ, որոնք թունդ ելան, մեր ցեղին նկատմամբ օտար համակրութիւններու կորուստին ու Հայ անուան՝ երոպական հանրային կարծիքին մէջ՝ արատաւորման վտանգը միայն տեսնելով հոտ: Բայց մեզի համար է՛ն կօկծալին ու է՛ն գծնակը քանի մը հայերու գողութեան կամ խարդախութեան հասարակ ու մարդկային պարագան չէր այնքան, որքան՝ մեր ազգային բարքերուն ալլասերութիւնը մէջ Գթութեան կատարած աղէտաւոր ազդեցութիւնը: Գողերն ու խարդախները, վերջապէս, ամէն երկրի ու ամէն ազգերու մէջ բունուող ընկերային փտութեան ծաղիկներ են, ընդհանուր ընկերային կազմակերպութեան ու գոյութեան պայմաններուն տիեզերական աններդաշնակութեանն իսկ արատաւորուած շատ անգամ:

Ամէն արժանապատուութենէ ու ամէն առնականութենէ զուրկ՝ մուրալու կամ խարդախելու միայն ընդունակ ժողովուրդի ամօթալի համբաւի մը վերջնական նուիրագործութիւն չէինք կրնար անշուշտ անհոգ ու անտարբեր մնալ: Բայց տաճիկ բարբարոսութիւններու առջև մեր զլխիկօր ու շորեթթաթ կրաւորականութիւնը՝ ոչխարի պէս մորթուող ստրկացած ցեղի մը կասկածը արդէն արթնացուցած էր երոպական ազգերու մէջ, ու հոտ իսկ պէտք էր փնտռել երոպական հանրային կարծիքին մեզի ի նպաստ ծառանալուն տարապայման յապաղումը:

Յետոյ, երբ՝ Կորուսէ փախչելով՝ Հայը, իր հայրենի կիտաւեր օճախը ձգած՝ արտասահման կը գաղթէր՝ բնականաբար պիտի մուրար, ու Գթութիւնը արդէն չէր սպասած որ Հայը ձեռք երկնցնէ իրեն: Գթութեան պաշտօնական ներկայացուցիչները— իրենց կարծեօ թըշուառութեանն մուրալու խելայեղ անապարանքով մը— ընդատալ փութացեր էին փախտական Հայուն: Բոլոր նաւահանգիստները բռնուեր էին անոնց զթափատ արշաւանքէն: Ու Հայ խեղճութիւնն ալ՝ մարդկային ընդհանուր խեղճութեան պէս՝ շահագործուեցաւ Գթութեան տիրոջօտուր ու բարեպաշտ ներկայացուցիչներէն: Քանիներ, մեր երոպացի սխրալի պաշտպաններէն, իրենց բազմը շինեցին Հայուն գժբաղգութեանն: Չէ՛, պէտք չէ՛ որ Հայ անունը հպարտութեամբ կրող մը գող ելլէ կարգ մը կարճամիտ երոպացիներու անիմաստ ու անբարեխիղճ արհամարհանքին կարելութեանն: Հայութեան կողոպուտը Տաճկաստանի մէջ չի վերջանար, ու Գթութեան պաշտօնական ներկայացուցիչներուն՝ Հայ անունին շուրջը մեքենայած ջերմոտանդ շահատակութիւնները կրնան նսեմացնել Հայուն մուրացկանի ու խաչագողի է՛ն օտորին արարքը:

Հոտ չէր օակայն վտանգը:



Հայ բարբարուած երիտասարդներ՝ Գթութեան հարամ հացը ուտելու վարժուած՝ այլ ևս անկարող կ'ըլլային կոր աշխատելու, բան մը ընկերու: Ու հետզհետէ ամբողջ դատարկապորտ ու անկարող սերունդ մը կը գոյանար արտասահմանի մէջ: Ասոյք ու խելանի տըղաքներ՝ «հրաշքով ապրելու» հրաշքը իրագործած՝ ամուլ ու տժգոյն անշարժութեան մը մէջ կը փճանային, կը սպառէին, արհամարհոտ՝ քրտնելով կեանքերնին վատրկելու ամէն միջոցի ու բոլորովին անձնատուր՝ վատաողջ ու մահացու երազներու...:

Հոտ էր վտանգը: Կորուսիներ— որոնք պիտի կրնային թերեւ օգտակարապէս վատնուիլ — կը հատնէին, կը լինային ախտաւոր ցնորքներու ետեւն վազելով ընդունայն: Այնպիսի շրջանի մը մէջ, ուր Հայ երիտասարդութիւնը կոշուած էր է՛ն վոսմ սխրագործութիւն:

ներուն իրականացումին, անոր մէկ ձառը կը կորսուէր իր ծոականութեան տարապայման զարգացումէն, իր ակորժակներուն ապերասան աճումէն իսկ: Գերագոյն երջանկութիւններու փոռաօրութեամբը՝ է՛ն սև թշուառութեան մէջ կը մխրճուէր ան զլիւիվայր ու անհնարին վայելքներու մոլեգին տենչանքովը՝ անօթի կը մնար:

Անշուշտ այս պարագային մէջ գտնուողները ժղուեցան արարքներու, որոնք չէին կրնար երբէ՛ք Հայ անունը արատաւորել և որոնք վնասեցին սակայն քիչ թէ շատ հայանպատա տրամադրութիւններու, վիրաւորեցին երբեմն սա միւս զթուլթիւնը, որ ազնիւ էր ու անհրաժեշտ Հայաստանի Հայուն համար, որ, ան, չէր կրնար աշխատիլ, չէր կրնար հերկել արիւնոտ հողը՝ իր բորէն իսկ զրկուած...:

Հետեւեալ պարագան ասոր մէկ համադրական օրինակը կրնայ սեպուիլ: Վէպ մը չէ՛ ասիկա, այլ պատահած իրողութիւն մը:



Մեծահարուստ լէյտի մը, որ իր բարեգործութիւններովն ու ամուսնական դժբաղդութեամբը — երկու անխուսափելիօրէն յարակից բաներ անզլիացի բարերարութիւններու համար — տիեզերական համբաւ մը կը վայելէ Անգլիոյ մէջ, հայկական կոտորածներու վաղորդայնին՝ Մարտէլլ գացեր էր, հոն հասնող փախուտական հայերուն օգնելու եւ նիւթապէս աշակցելու համար գաղթականներու տեղափոխութեան գործին:

Պոլսեցի հայ երիտասարդ մը, որ այդ օրերը, գաղթական խումբի մը հետ, Մարտէլլ կը հասնէր, իր աշխուժութեամբը և իր կիսկատար այլ յանդուգն անզլիութենովը կըրցեր էր բարեգործ լէյտիին ուշադրութեանը արժանանալու: Լէյտին զայն բարերարքեր էր և անոր թարգմանի ու գործակատարի առժամանակեայ պաշտօն մը տուեր էր իր ու գաղթական հայերուն միջեւ, որոնք հետ միշտ շփուիլ օտարուած էր, իր մարդասիրական դերին բերմամբը և որոնք զիշեր ցորեկ իր գուռը ափ կ'առնէին, իր շուրջը կը թափառէին, իր պաշտպանութիւնը կը հայցէին:

Երիտասարդը, իր փութկոտ ու ուշիմ ծառայութիւններովը, յաջողեր էր լէյտիին բարեացակամ համակրութիւնը շահիլ, այնպէս որ՝ Մարտէլլէն հեռացած ատեն՝ չուզելով լքել զինքը անտոյգ ու անօգնական վիճակի մը մէջ, զայն միասին Լոնտօն տարեր էր, անոր բոլոր ծախքերը հոգալով, ու Լոնտօնի մէջ ալ կը շարունակէր անոր իր նիւթական պաշտպանութիւնը, որպէս զի կարող ըլլայ ան գործ մը գտնել ու անկախօրէն ապրիլ աշխատելով:

Բայց երիտասարդը չէր կրնար գոհանալ մեծահարուստ լէյտիին այդ խնամոտ բարութեամբը: Բարերար-

եայի խոնարհ ու խնդրական գիրքին չէր կրնար համակերպիլ իր տիրական փառաօրութիւնը: Ուրիշ բան պէտք էր իրեն, ամէն բան պէտք էր իրեն: Ու վիթխարի դաճափար մը կը շարչարէր իր միտքը: Գիշեր մը յանկարծ յղացեր էր զայն, ու մինչեւ լոյս անկողին մէջ անջուն գարձարձեր էր ան բուն տենդէ մը այրուած:

— Սիրահարն ըլլալ լէյտիին, ու երկնանլ, փոռիլ անոր միլիոններուն վրայ...

Ահա՛ գոռոզ երազը, որ կը հայածէր զինքը ու կը բռնէր, կը խափանէր իր ուղեղը տարամբժ ու բանաւոր փորձութեամբ մը:

Կամաց կամաց վարժուեցաւ, համոզուեցաւ, կապուեցաւ այդ գէշ ցնորքին, անով զինովցաւ, տարուեցաւ, ու տարօրինակ ու սրտառուչ լաւատեսութիւններ արթնցան, ծառացան իր մէջ: Աօրիկա եղածի, լմնցածի յաջողածի պէս կուգար իրեն, ու շատ անգամ միւ միւսակ կը յայտէր տիրացուած անսահման վայելքներու առթած ներքին անզուսպ ու խօլ բեքիրութենէն: Սրարշաւ, փառաւոր կառքերու մէջ տարածուած՝ քաղաքներու աղմուկը նուաճելու գերագոյն պերճանքներու շողարձակումին մէջ իր խրոխտ երիտասարդութեան խոնչէնքն ու ձանձրոյթը պատեցնելէ կը սթափէր երբեմն իր անշուք խուցին մէջ: Բայց չէր յուսահատեր: Ընդհակառակը՝ իր հաւատքը հետզհետէ կ'ամրապնդուէր վերջնական յաղթանակին վրայ: Անցեալին մէջ իր ազուտ սղու սիրային օխրագործութիւնները կը քաջալքելին զինքը ու վստահութիւն կը ներշնչէին իրեն իր այլանգակ առաջադրութեան յաջողութեանը համար:

Իր բարերարութիւն տարիքը, ընկերային դիրքը, անեղբրահաշակ անունը անշուշտ խոչընդոտներ չէին թուեր ըլլալ մեր կարծիք Տօն Ժուանին աչքին: Անպատճառ ամուսնանալու պէտք կ'ար մի... բռնութիւն ըլլալու էր:

Այս մտածումը երթալով լլկող յաճախանք մը գարձաւ իրեն: Ա՛յ ցուն չէր քնանար, ու տենդը, յարածուն ուժգնութեամբ մը, կը գալարէր զինքը: Քանիցս, լէյտիին հետ մինակ գտնուելով, իր ահաւոր որոշումը գործադրել պատրաստուեր էր: Բայց, ամէն անգամ, խնդրակուր մը ներկայութիւնը կամ աղախինի մը յանկարծական մուտքը արգելք եղեր էին իրեն: Այս տեսակ պարագաներու մէջ կը հարկադրուէր գերմարդկային ճիգ մը ընել ինքզինքը բռնելու, վերջնական պատկուտին համար պրկուած, փոթորիւմ իր բովանգակ էութիւնը հանգրտեցնելու, ու կը շտապէր փողոց նետել ինքզինքը ու ժամերով կը քալէր, կը վազէր խելայեղօրէն, առանց չորրդին նայելու, մինչեւ որ զիշերը իջնար ու բերէր իրեն խաւարին բարերար յուսադրութիւնները:

Ահեղ ու ճակատագրական օրը չուշացաւ օսկայն: Լէյտին՝ բարեգործական յանձնարարութեան մը հա-

մար պէտք ունենալով անոր՝ կանչել տուեր էր իր երիտասարդ պաշտպանեալը։ Առտուն կանուխ՝ իր անհրաժեշտ մրափէն ցատեցելով՝ երկաթօրէն, խղճմտօրէն արգուզարգը խնամելէ ետք, գացեր, ներկայացեր էր անլէյտիին բնակարանը, որոշեալ ժամէն բաւական առաջ։ Ու սայտնի մը մէջ կը սպասէր հիմա իր բարերարուհիին, որ դեռ չէր եկած։

Գերագոյն վայրկեանն էր որ կը մօտենար։ Երիտասարդին սիրտը կը տրոփէր գահավէժ ոռոտութեամբով։ Անիկա կը զգար թէ պահ մը վերջո՞ զօւցէ ահագին ու վտանգաւոր բան մը պիտի պատահէր, բայց իր անզուսալի որոշումին մէջ ամբողջ էութեամբը պրկուած՝ կը պատրաստուէր, կը լարուէր վերջնական ու վճռական փորձին, անոր մէջ զրած իր կեանքին էն խիզախ երազը, էն յաղթական յոյսը, անկից ակնկալիւով իր ապագային, իր ճակատագրին էն շքեղ յեղաշրջումը, ու՛ այս բոլորին համար՝ քիչ մըն ալ անշուշտ աչքը առած կարելի անյաջողութեան մը անսահման խաղցումը։

Յանկարծ զօւրը բացօթեցաւ ու լէյտին ներս մտաւ։
— Բարի՛ լոյս, ի՛նչպէս էք, ըսաւ ան, բարեացակամ շեշտով մը։

Երիտասարդը չպատասխանեց։ Դիւային ժպիտի մը մէջ դէմքը ծածածակելով, կը լսէր ան, աչքերը՝ արտակարգ նայուածքով մը լէյտիին սեեաած։

— Ի՛նչ կայ, ի՛նչ ունիք, հարցօց լէյտին վրդովուած, ենթադրելով թէ... հայկական նոր աղէտքի մը գուժին ազդեցութեան տակ՝ կոնիծէ կը գալարուէր գուցէ խեղճ տղան, կամ թէ ստիպողական խնդրանք մը սներ, գորչէր համարձակէր ըսել իրեն... վեհերոտ հայը։ Լէյտին ասանկ հրապուրիչ ու սրտառուչ պատրանքներ ունէր սակաւին հայերուն վրայ։

Այն ատեն երիտասարդը բուռն ու ձախաւեր թափով մը, լէյտիին ոտքը նետուեցաւ ու՝ ձեռքը կուրծքին դրած, զրուսը կանակն ի վար գլորելով, բուռնութիւն սիրահարի մը բոլոր եղերա-կատակերգական խելայեղութեամբը սկսաւ հատաչել։

— Օհ, տիկին, կը սիրե՞մ ձեզի... կը սիրե՞մ ձեզի... օհ, կը սիրե՞մ...

Լէյտին յանկարծակիի եկած իր ճերմակ մազերուն ներշնչած այս անակնկալ սիրայալուստութենէն ու կռահելով նոյնհետայն բովանդակ պիղծ մտածումը իր պաշտպանեալին՝ անկին մը գնաց գանգակոճակ մը կոխել։ Անմիջապէս ծառայ մը ներկայացաւ։ Լէյտին հրամայեց անոր զօւրս առաջնորդել հայ երիտասարդը։ Միջին ատար չէր սպասած խեղճ տղան, որ ա՛լ հեռանալ կորսուիլ, աներևութանալ միայն կ'ըղձար հիմա ու՛ իր ամօթին մէջ դանդաղելով՝ յանցաւորի պէս, զողի պէս զօւրս կ'անապարէր։

Այդ օրէն ի վեր անզիտացի մեծանուն բարերարուհին իր գուռն ու սիրտը վերջնապէս գոցեց ամէն հայ խնդրանքի ու Հայ հեռաւոր թշուառութեան ալ առջև։

ՓԻՒՐԳԻՆՑ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

Փրանքօ-թրքական վէճը չի կարգադրուեցաւ, ինչպէս որ կը կարծեն ոմանք։ Դուրը այս խնդրոյն առթիւ հանրային կարծիքը մոլորեցնելու զիտաւարութեամբ այս օրերս հեռագրական գործակալութեանց հաղորդեց, թէ ֆրանսական կառավարութիւնը վաւերացուցած է Պ. Թիւպինիի եղած կարգադրութիւնը և թէ հետևապէս ֆրանսական շրջապահանջութեան երեքը իրենց լուծումը ստացած ըլլալով՝ Փրանսայի կատարեալ գահացում առաւ համար օրիշ բան չի մնար, բայց միայն Լօսանտոյի խնդիրն ալ վերջացնել։ Ու կ'աւելցնէ թէ այս խնդիրն ալ կարգադրուելու վրայ է։

Ճշմարտութիւնը այն է սակայն որ ֆրանսական կառավարութիւնը կամ Պօլսոյ զեսպանատունը այս խնդիրներուն լուծումը վաւերացնող կամ անոր հաւանող բան մը հաղորդած չէ Դրան։ Դիսպանատան գործակատար Պ. Պաբս պարզապէս կը հաստատէր թէ ստացած է Արտաքին Գործոց նախարար Թէվֆիք փաշայի կողմէ զրկուած գրութիւնը, որ վէճին կարգադրութեան համար առաջարկ մը կը ներկայացնէր։

Գալով Լօսանտոյի խնդրին՝ Փրանսայի պատասխանը հաւանականաբար մօտ օրէն կը հաղորդուի թիւրք կառավարութեան։ Փրանսան շնորհունիր Դրան առաջարկը և խնդրոյն կարգադրութիւնը կը հիմնէ 9 առ 100 սոկոսի վրայ, որ 350,000 սոկոսի գումար մը կը գոյացնէ։ Կը յուսացուի որ Դուրը տեղի պիտի տայ, վասն զի Տաճկաստանի համար նորանոր կնճառութիւններու երկուրը կը տիրէ պալատին մէջ։

Դիւանագիտական շրջանակներու մէջ տիրող ընդհանուր կարծիքը այն է թէ նոյնիսկ Լօսանտոյի խնդրոյն կարգադրութեամբ ֆրանքօ-թիւրք վէճը վերջացած չի կրնար նկատուիլ։ Փրանսական զեսպանատունը, ինչպէս միւս զեսպանատունները, երկար ժամանակ է ի վեր շարք մը առկա խնդիրներ ունէր եւ զրեթէ միշտ դժուարութիւններու կը հանդիպէր Դրան հետ իր ունեցած յարաբերութիւններուն մէջ։ Փրանսան՝ օգտուելով իր եւ թիւրքի մէջ զիւանապիտական ներկայ խզումէն՝ պիտի սուգէ ո՛չ միայն զիզուած այդ բոլոր խնդիրները—որոնց մէջ կարեւորագոյն տեղը կը բռնէ Թունուզի դաշնագրութեան ճանչցուիլը— միանգամ ընդ միշտ կարգադրել, այլ եւ միջոցներ ձեռք առնել սրպէս զի՛ հաշտութենէ յետոյ՝ ֆրանսական շահերը ու է խոչընդօտի չբաղխին զարձեալ Տաճկաստանի մէջ։ Ապտիւլ Համիտ շատլաւ գիտէ Փրանսայի այս մտադրութիւնը և անոր հետ իր յարաբերութիւնները, առանց ծանր զիջումներու, վերբեկսիլ կարենալու համար քանի մը օր առաջ Ռուսիոյ

բարեացակամ միջամտութեանը դիմեց: Ապահով ազ-
բիրներէ ստացուած տեղեկութիւններուն համաձայն
Ռուսիան մերժած է ո եւ է միջամտութիւն, բնականաբար
իր դրամական փոխառու գաշնակցին ամենաչնչին տը-
հաճութիւն մը իսկ չպատճառելու մտահոգութեամբ:

Օրուան քաղաքական կարեւոր նորութիւնն է Չարին
Ֆրանսա ըրած այցելութիւնը: Հանրապետութեան նա-
խագահ Պ. Լուպէին իր կայսերական հիւրին հետ ունե-
ցած տեսակցութեանը մեծ կարեւորութիւն տրուեցաւ քա-
ղաքական շրջանակներու մէջ: Հիմակուրնէ յայտնի չէ
թէ ի՞նչ փոփոխութիւն կամ արդիւնք պիտի առաջ բերէ
այս տեսակցութիւնը եւրոպական պետութեանց իրարու
հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

Ճիշտ այն պահուն, ուր Հայաստանի կացութիւնը
ծայրայեղորէն կը վատթարանար և Հայ արիւնը անգամ
մըն ալ կը ներկէր Մուշի և Սասունի հողերը և երբ Չա-
րին ու Լուպէին տեսակցութեան միջոցին իոկ հեռա-
գիրները Հայ տաղանապի ու տառապանքի նոր բոթը կու-
տային աշնարհին՝ Հայ ժողովուրդը յուսոյ ու ակնկա-
լութեան վայրկեան մը ապրեցաւ եւ Քոմարէնի տեսակ-
ցութենէն իր վիճակին ճարճարակ մը սպասեց միամիտ
ակնկալութիւններով: Թայպի բարիզեան թղթակիցը
Պ. Պրովից կը կարծէ «որոշապէս հաստատել» թէ երկու
կառավարութեանց պետերուն մէջ եղած խօսակցութեանց
նիւթը գրեթէ բոլորովին սօսաւոր և ծայրագոյն Արևելքի
խնդիրներն էին: Երկու կառավարութիւններն ալ հաս-
տատապէս որոշած ըլլալ կը թուին ստիպելու Թիւր-
քիան որ ձգձգելու իր խարդախ գրութեամբ չիտու-
սափի այլեւս իր խոտոտումները գործադրելէ: Պ. Պրովիցի
կարծիքով Ֆրանսա եւ Ռուսիա ըմբռնած պէտք է ըլլան
թէ ա՛լ ևս ստիպողական ժամանակը հասած է Պետու-
թեանց մէջէն վտարելու այն իրարու գէժ նախանձը որ
մինչեւ հիմա արգելք եղած է սուլթանին վրայ ճնշում
բանեցնելու և Արևելեան հարցը կարգադրելու: Խնդրոյ
նիւթը եղաւ նաև, կ'ըսէ Թայպի թղթակիցը, «սանաւո-
րապէս Հայկական հարցը և «Ռուսիա, որ Չարդերու
ատեն արգիլած էր ո և է ազգու միջամտութիւն, Չարին
բերնով կը յայտարարէ այսօր թէ ա՛լ անկարելի է իրեն
նորէն հանդիսատես մնալ կոտորածներու, և թէ հայերը
ա՛լ հիմա պէտք է ընտրեն մէկը կամ միւրը, — կա՛մ
ընդունիլ ուսական պաշտպանութիւնը եւ կամ շարու-
նակել մնալ իրենց արդի թշուառ կացութեան մէջ»: Թայպի
Չարին վերագրուած այս երկգիծի խօսքին ակ-
նարկելով՝ իր առաջնորդող յօդուածին մէջ կարգ մը խոր-
հրդածութեանց հետ կ'աւելցնէ թէ «առիկա Հայերուն
համար դժուար ընտրութիւն մըն է և այնպիսի ընտրու-
թիւն մը՝ որ նայնիսի եթէ կարելի ըլլար՝ ծագում պիտի
տար շատ մը դժուարութիւններու»:

Ի՞նչ որ ալ ըլլան այս տեսակցութեան սնոին յայտ-
նուած կարծիքները, իրողութիւնն այն է թէ հայկական

հարցը հրատապ ու սուր կերպարանք մը առած է: Հայե-
րուն կը մնայ — մանաւանդ յեղափոխական Հայերուն —
կշռել ու գիտնալ վայրկեանին ծանրութիւնը և պաշտօնա-
կան յուսադրիչ խօսքերէն առանց հմայուելու, առանց ան-
շարժ լաւատեսութեամբ մը Թիւանագիտութեան ակնդէտ
բերանաբաց ու ծալլապատիկ նստելու՝ գիտակցութիւնն
ունենան իրենց պարտականութիւններուն և վայրկեան մը
չղաղրին իրենց սեփական ուժին կոթնելու հաստատ ուխ-
տագրութենէն:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՇԻ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ

ՄՄՄՄՄՄՄՄ

«Տէլլի Երեւոյ»ի Պոլսոյ քղրս կիցը հետեւեալ հետա-
գիրը զրկած է, որ երեքշաբթի 28 սեպտեմբերի
քիտին մէջ և գար ամբողջապէս կ'արտատպենք:

«Հայաստանի մէջ պատահած վերջին դէպքերուն
լուրերը հետզհետէ կը հասնին հոս, Ինսպանատուն-
ները: Մինչև հիմա, հեռագրով հասած լուրերը՝ թէեւ
շատ անորոշ՝ սակայն ծանրակշիռ հանգամանք մը ու-
նէին արդէն: Կասկած չի կայ թէ Հայաստանի խռովեալ
նահանգներէն հասած բոլոր նամակները, ըլլան անօնք
քահանաներէ և կամ այլ անհատներէ գրուած, կը բաց-
ուին ու կը կարգացոյին կար և միայն այն ատեն կը
տրուին իրենց հասցէին, երբ անոնց մէջ խժգժութիւն-
ներու մասին և կառավարութիւնը այլապէս լուրեր չըլ-
լան: Ինչ որ սակայն յայտնի կ'երևայ ձեռք անցուած
նամակներէն սա է թէ՛ վերջին յունիս և յուլիս ամիսնե-
րուն մէջ խռովութիւնը և քիւրտերու խժգժութիւնները
սովորականէն աւելի էին:

Հեռագիր մը տեսայ, որ յունիս և յուլիս ամիսներուն
Մուշի մէջ պատահած դէպքերուն մէկ ամփոփումն էր:
Կը հաստատուի թէ այդ միջոցին սպաննուած անձե-
րուն թիւը 100ի կը հասնի: Սպանութիւնները ընդ-
հանրապէս առանձին անձերու վրայ գործադրուած էին,
և քիւրտերու կողմէ այս յարձակումներուն պիտաւոր շար-
ժառիթը աւազակութիւնն էր: Յունիս ամսոյ սկիզբը
քիւրտերը յարձակեցան Բերթալի գիւղի վրայ: Վեց
անձեր սպաննուեցան, շատեր վիրաւորուեցան և ամ-
բողջ գիւղը թալանի տրուեցաւ: Յուլիսի սկիզբը քիւրտ
ցեղապետ մը, Շէրիֆ աղա, անհրեւութացաւ, և Մո-
կանցի հայերը զայն առևանգած ըլլալ ամբաստանուե-
ցան: Կառավարական պաշտօնեաները գրեթէ 40ի շափ
հայեր ձերբակալեցին և վերոյիշեալ ցեղապետին մար-

դերը յարձակեցան և թալանի տուին վեց գիւղեր: Շա-
բաթ մը վերջը կարուած մարդուն մարմինը գտնուե-
ցաւ Մականցէն բաւական հետու, բայց և այնպէս ընդ-
տեղը յարձակեցան նորէն նոյն գիւղերուն վրայ, թալ-
լեցին տուները, այրեցին եկեղեցին և աւերեցին հունձ-
քերը որոնք ձգուած էին միմիայն կիներու հսկո-
ղութեանը:

Մուշի տեղապահը և թաղական խորհրդոյ անգամ-
ները օգոստոս Տին սուլթանին հեռագիր մը ուղղեցին
իրենց ցաւերը յայտնող և խնդրեցին կայսերական իրա-
տէ մը որ պիտի ապահովէր իրենց կեանքերը կամ
պիտի թողարտէր իրենց ուրիշ տեղ մը գաղթել: Իրենց
խնդրանքին իբրև պատասխան՝ առաջնորդը և խորհուր-
դին անդամները հարցաքննութեան մը ենթարկուեցան:
Անոնք արիւարար ու յստակօրէն իրենց ապացոյցները
աւելին ընդհանրու կողմէ կատարուած խօսակցութեանց մա-
տին: Ասոր արդիւնքը սա եղաւ միայն թէ ընդտեղը
աւելի կատղեցան եւ օգոստոս 13էն մինչեւ 20, այ-
սինքն հինգ օրուան մէջ 25 անձեր եւս սպաննուե-
ցան: Օգոստոս 20ին տեղապահը և խորհրդոյ ան-
դամները սուլթանին սուրի հեռագիր մըն ալ ուղղեցին
իրաց վատթար կացութիւնը յայտնող: Ամսուն 21ին
Օրմանեան պատրիարք պալատ հրաւիրուեցաւ, և ա-
պահովութիւն տրուեցաւ իրեն թէ սուլթանը լուրջ հը-
րամաններ տալու վրայ էր խօսակցութիւնները արգիլելու
համար Մուշի մէջ, ու պատրիարքին առաջարկուեցաւ
հեռագրել ժողովուրդը հանդարտեցնելու համար: Ստու-
գապէս գիտեմ օակայն թէ պատրիարքին ղրկած հե-
ռագիրը կէս ճամբէն ընդհատուեցաւ և թէ՛ վերջէն՝ ինչ
սր իրեն թող տուին որ հեռագրէ՝ սուլթանին խօսակց-
ութիւնները արգիլելու համար տուած հրամաններուն մէկ
ընդօրինակութիւնն էր:

Սեպտեմբեր 2ին Պոլիս հասած խորհրդաւոր հեռա-
գիր մը առաջին լուրերը կը բերէր Մուշի շարժերուն:
Դեպքանատուններուն հաղորդուած պաշտօնական հեռա-
գիրը կը մեկնէր թէ ՏՕի չափ հայեր Մուշի տաճկա-
կան թաղը այրել ուզած էին եւ ատկէ առաջ եկած
խռովութեան մէջ երկու կողմէ շատեր սպաննուած եւ
վիրաւորուած էին: Անոնք որ գիտեն թէ տաճկական
աղբիւրներէ քաղուած հեռագիրները ինչ կը նշանակեն՝
չեն կրնար հաւտալ թէ ասիկա ճիշտ ըլլայ, բայց մինչև
հիմա ո՛ր եւ է անհատական նամակ հասած չէ մանրա-
մասնութիւնները պարզող: Մտոյց է սակայն թէ խար-
բերդէն, Էրզրոնէն, և Էրզրումէն զօրաբանակներու
կեղծոտնացում մը կայ դէպի Մուշ: Այսչափը նոյնիսկ
բաւական է ցուցնելու մեզի թէ ծանրակշիռ դէպքեր
պատահելու վրայ են և թէ մենք պէտք է աւելի ընդար-
ձակ տեղեկութիւններու սպասենք:

Յուլիոսի սկիզբէն ի վեր Սասունէն ո՛ր և է լուր առ-
հուած չէ, բայց կը հաստատուի թէ զինուորները

Գիւրտերուն հետ համաձայնութեամբ կը գործեն, և այս
լուրի պակասութիւնը բնականաբար շատ անպատու վի-
ճակ մը ենթադրել կուտայ:

Կը կարծուի թէ հայկական հարցը նորէն պիտի
բացուի: Ուրախալի է սակայն գիտնալ որ դեպքանա-
տուններէն զօնէ երեքը ուշադրութեամբ կը հետեին բո-
լոր անցած դարձածներուն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Օգոստոս 14ին յանկարծ պալատ կանչուեցաւ Օր-
մանեան պատրիարքը: Սուլթանին առաջին քարտու-
ղար Թաֆսին պէյ հաղորդեց իրեն ուղղակի սուլթա-
նին քաշուած հեռագիր մը, որով Մշոյ երկու գիւղե-
րուն մէջ պատահած խօսակցութիւնները իմացնելով՝ իրենց
կեանքին ու պատուոյն պահպանումը և կամ գաղթե-
լու տեղի մը որոշումը կը խնդրէին յուսահատ գիւ-
ղացիները:

Թաֆսին կը հարցնէ Օրմանեանին թէ ինքն ալ
այսպիսի լուր մը առած է: Պատրիարքին ժխտական
պատասխանին վրայ՝ սուլթանին քարտուղարը կը յա-
ւելու թէ Մուշի կողմերը յեղափոխականներ կան ու
անոնք են այդ ընդհարումներուն տեղի տուողները:
«Փրեցէ՛ք, կ'ըսէ Թաֆսին Օրմանեանին, գրեցէ՛ք այն-
տեղի առաջնորդին, որպէս զի ցոյց ապայայտ մարդիկը
տեղական իշխանութեան:»

Չենք գիտեր թէ Օրմանեան ի՞նչ պատասխան տուա՞ւ
մատնութեան այս կայսերական հրաւերին: Սաչափը
գիտենք օակայն, որ Մշոյ անհնարին կացութեան մը
մատնուած գիւղացիներուն պաշտպանութեանը համար
ո՛չ թագրի գրել տուաւ և ոչ ալ գիմու ըրաւ: Ասիկա
բոստանի եղելութիւնն է:

Երեք օր վերջը Օրմանեան կրկին կանչուեցաւ
պալատ: Այս անգամ, Թաֆսին կը հաղորդէր իրեն թէ
սուլթանը՝ իր գահակալութեան տարեդարձին առթիւ՝
կ'ուզէր անոր ցոյց տուած «հաւատարիմ ու արժանա-
ւոր անձերը» պատուանշաններով վարձատրել: Օրման-
եան այս երանաւէտ լուրը կ'ընդունի գոհունակ ու մի-
մոտական ժպիտով մը, ու իր ահադին մարմնովը ու-
րախութեանէն ցատկոտելով կ'երկրպագէ ու պատրիար-
քարան կը դառնայ:

Նոյն գիշերն իսկ ցանկը պատրաստած էր արդէն 18 հոգիի, որոնց է՛ն զուգըր զրած էր Պատրիարքարանի առաջին գործակատար Տէր Ներսէսեան Տիրգրանին եւ երկրորդ գործակատար՝ Թարուծին էֆէնտին անուն, ներք: Այս երկու մարդակերպ հրէշները հայ ժողովուրդին մեացած արիւնը ծծողներն են ու ասոր համար իսկ կը վարձատրուին:

Օրմանեան իր պատրաստած ցանկին մէջ կը գնէ կարգ մը վարդապետներ ալ, որոնք՝ պատուօք նշան չտած՝ աւելի պատուաւոր էին:

Օրմանեան, փոխանակ այս թիթեղի կտորներուն, շէր կրնար միթէ՛ կեանքն ու պատիւը վտանգի տակ՝ տառապող ու տանջուող ժողովուրդին վիճակին դարձան մը խնդրել: Ի՛նչ կ'արժեն այդ նշանները: Պոչոյ փոքրցի աւելածուններն ու բնանակիրներն ալ կը կրեն զանոնք, ինչպէս բոլոր համազգեցտուած քաղանները, որոնք Հայուն արիւնը խմեցին ու կը խմեն շարունակ: Հայը պէտք ունի՝ սուլթանէն շնորհուած նշաններ կախելու իր կուրծքին վրայ, երբ իր կուրծքին տակ սուլթանին առատօրէն ու անխտիր տուած վէրքերուն մշտութիւն նշանները կը կրէ:

Օգոստոս 18 շաբաթ երեկոյին, Տէր Ներսէսեանը՝ խոշոր տուրակ մը շալկած՝ Չաքմաքընլարէն վեր ելլող բնոնակրի մը պէ՛ն քրահնքի առ հեւ ի հեւ Պատրիարքարան հասաւ: Պատրիարքարանին մէջ զիւրապետներէն ոմանք տմշնարէն անմիջապէս մեկնեցան: Իսկ պատրիարքին ու Տէր Ներսէսեանին ուրախութիւնը չափ ու սարման չունէր:

Օգոստոս 19ին Օրմանեան՝ շրջապատուած սուլթանին խնկարկու երկու տխրահոյակ վեղարաւորներէ ու բազմաթիւ վարդապետներէ՝ Մայր-Եկեղեցիին մէջ հանդիսուոր ու շքեղանայ աղօթքներ ըրաւ սուլթանին թանկագին կենացը համար, որպէս զի Հայուն Աստուածը հաստատուն պահէ զայն իր գահին վրայ՝ Հայութիւնը իսպառ ջնջելու համար:

Մինչ Օրմանեան՝ Հայ Եկեղեցւոյ բեմը բարձրանալով՝ լիաշուրթին կ'աղօթէր սուլթանին «արեւատութեանը» համար, անդին Մուշ ու Սասուն արեան մէջ կ'ողողուէին...:

Սուլթանի գահակալութեան տարեգարձէն երկու օր վերջը, սարսափելի ջարդին իրականութիւնը դուժեց Մշոյ տեղապահին հեռագիրը, որ կ'ըսէր. «Մուշը թալլուեցաւ եւ խժովութիւնը կը շարունակուին: Կայսերական դիւանութեան դիմեցէք: Օգնութիւն, օգնութիւն»:

Օգոստոս 23ին հինգշաբթի օրը Օրմանեան այս հեռագիրը սուլթանին տարաւ, զիտնալով արդէն որ ա՛մէն բան անօր հրամանան էր օր տեղի կ'ունենար:

Չարդին մանրամասնութիւնները յաջորդ անգամ:



Մուշի ու Սասունի ներկայ տագնապալից վիճակին առթիւ կ'երևի թէ օտար պետութեանց ներկայացուցիչները ճնշուած բանեցուցած են տաճիկ կառավարութեան վրայ, որովհետեւ ասկէ քննիչներ զրկուեցան յանցաւորները պատժելու համար: Նոյնպէս բոլոր թերթերուն մէջ պաշտօնական շրջաբերական մը հրատարակուեցաւ, որով խռախ էր պատուիրուի գաւառի կառավարիչներուն եւ ուրիշ պաշտօնեաներուն որպէս զի անգամ մըն ալ տեղի շտրուի այդ օրինակ անկարգութիւններու:

Ահաւաստի՛կ շրջաբերականը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆԸ

Համայն Թուրքիոյ բոլոր կուսակալութիւնները 2 ձեւագրելով Խնքը 1319 թուակիր շրջաբերական մը ստացած են, որուն մէջ հետեւեալ հրահանգները կը տրուին.

«Վեհ. Սուլթանին էն մեծ փափաքն է որ հանրային անդորրութիւնը, խաղաղութիւնը, ապահովութիւնը եւ հանդարտութիւնը միշտ ու հաստատ կերպով պահպանուին, ինչպէս նաեւ կը փափաքի որ բոլոր Կայս. հպատակները, առանց կրօնքի եւ ազգի խտրութեան վայելեն Կայս. շնորհները: Արդ, ինչպէս քանիցս ծանուցուած է, այս անգամ եւս Կայս. Իրատէ մը կը հրամայէ որ Կայս. այդ փափաքը հիմբոնուի բոլոր գործառնութեանց, հոգ աարուի տեղական անդորրութիւնը պահպանելու մասին, եւ եթէ կարգ մը խռովարարներու կողմէ տեղային անդորրութիւնը վրդովող պարագայ մը տեղի ունենայ, բարեկարգական միջոցներով անոյ առաջը անմիջապէս աճուի տեղւոյն վրայ, հրգեհ մը մարելու պէս, առանց անոր տարածուելուն եւ ժողովուրդին միջամտութեան առիթ տալու: Կը հրամայուի նաեւ Կայս. արդարասիրութեան եւ կանոնի հակառակող գործառնութեանց տեղի չաալ, պաշտօնեաներու կողմէ ոչ մէկուն նեղուելուն պատճառ ըլլալ: Հոգ պէտք է տարուի որ ժողովուրդը իրարու վրայ չի յարձակի, եւ մեծ ուշադրութիւն պէտք է ըլլայ որպէս զի հանրային գործերը արդարութեամբ կարգադրուելով Կայս. բարեհաճութեան հակառակող պարագաներու տեղի շտրուի: Այս հրամաններուն համաձայն ընթացք ու ծառայութիւն պիտի վարձատրուին, իսկ հակառակ պարագային պատասխանատուութիւն պիտի յառաջ գայ: Այս կէտերը պէտք է հաղորդել բոլոր պաշտօնեաներուն, ապազայ պատասխանատուութեանէ զգուշանալ եւ Վեհ. Սուլթանին բարեհաճութեան համաձայն բարուք ծառայութիւններ մատուցանել:»

Աւելորդ է ըսել, որ՝ այդ շրջաբերականը հրատարակել տալով՝ սուլթանը կուզէ փոշի նետել օտար պետութիւններու աչքին եւ կամ պարզապէս պաշտօնական ձեւակերպութիւն մը յարգած ըլլալու համար միայն կ'ընէ այդ բանը, որովհետեւ ամենայնայն թիւրքը գիտէ թէ ի՛նչ աստիճանի կարեւորութիւն ունին հոս յիշուած սպառնալիքները:

ՄԵՐ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, Չարին Ֆրանսայ այցելութեան առթիւ, քաղաքական կարևոր անձնատրոփիւններու միջոցաւ, Քոմբիէնը հասցուց երկու օրինակէ բողկացեալ յիշատակագիր մը, մին Ֆրանսական Հանրապետութեան Նախագահ Պ. Լուպէին, իսկ միւս Ռուսիոյ Կայսեր ուղղուած:

PRO ARMENIAի հետեւեալ հատուածը յստակօրէն կը պարզէ այս յիշատակագրին պարունակութիւնն ու ոգին:

PRO ARMENIAի վերջին 28 սեպտեմբերի թիւին մէջ Պ. Բիէո Գիլիան իր առաջնորդող յօդուածը կը վերջացնէ հետեւեալ յետ-գրութեամբը:

«Վերջին պահուն կ'իմանամ թէ Լոնտոնի Հնչակեան յեղափոխական Կուսակցութեան Կեդրոնական Քոմիթէն Քոմբիէնը ղրկած է, ձարին այդ քաղաքը հասած միջոցին իսկ, երկու օրինակ յիշատակագիր մը, մին ուղղուած Ֆրանսական Հանրապետութեան Նախագահին, իսկ միւսը Ռուսիոյ Կայսեր: Այս յիշատակագիրը ուղարկութիւն կը հրաւիրէ Հայաստանի ահաւոր կացութեան և ի մասնաւորի Մուշի եւ Սասունի ղէպքերուն վրայ եւ կը հրաւիրէ Ֆրանսան ու Ռուսիան կորովի միջամտութեան մը նախաձեռնութիւնը ունենալ վերջ մը զնելու համար խաղաղութեան մշտական վտանգ մը եղող իրարու վիճակի մը, գործադրել տալով Հայաստանի մէջ 1895ին երօպական պետութիւններու կողմէն իսկ առաջարկուած բարեկարգութիւնները:

«Այսպէս, առանց իրարու հետ կանխախորհրդակցած ըլլալու, հայկական յեղափոխական գործունէութեան երկու պատմական կուսակցութիւնները միենայն մտածուած ունեցած են կոչ մը ընելու Ֆրանսայի իրենց ժողովուրդին փրկութեանը համար: Տիւրք բան մը ու անքաւելի ամօթ մը պիտի ըլլար այս երկրին (Ֆրանսայի) համար, որ իրենց ձայնը չլսուէր այս եղբրական ժամուն ուր զիւզերը կը բռնկին և ուր արիւնը կը հոսի Մեծ-Մարգասպանին հրամանովը»:

ԼՈՒՐԵՐ

ՄՐՏՅԱԻ ԽՐԱՏ ՄԸ. Անգլիական կարեւոր շաքարաբերք մը, «Սրէքքէյրը» կը գրէ. «Քանի մը օրէն, Բեդրսպոսի մարտով պիտի գիտնանք անշուշտ զեպքերուն ճշմարտութիւնը: Կ'ոչգիտնէ յոսաւ սակայն թէ,

այս անգամ, Հայերը ալ սկսած են իրենք իրենց համար կռուիլ: Այն օրը ուր անոնք սրափին իրենց դարասոր գերիի բնութեանէն, Եսրոպան պիտի համակրի և վերջնականապէս պիտի պաշտպանէ զիրենք»:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԱԻՐԷ. «Պերլիներ Թաշկաշառ» կը գրէ թէ Հայաստանի ներքին գառաւերտն հետ հետագրական հաղորդակցութեանը անմիջական կերպով դադրած է: Կը վստիցուի թէ հոն տեղի կ'ունենան այնպիսի դէպքեր, որոնց վրայ կառավարութիւնը չուզէր որ բան մը հրատարակուի: Կառավարութիւնը կը շարունակէ պնդել թէ պատահածը Հայերն և Քիւրտերն ահա չապարզ կռիւ մըն է, ինչ որ երբեմն կը պատահի եւ կը վերջանայ ընդհանրապէս քանի մը տեճերու վերադարձովը կամ սպանութեամբը:

Խարբերքէ, ինչպէս նաև միսիոնարական աղբիւրներէ ասեալով յարերը կը հաղորդեն թէ հակակառավարական ընկերութիւն մը կազմուած է քիւրդերէ եւ քիւրտերէ, իրենց կեդրոնը Պերլիս, եւ Հայաստանի մէջ ձեռնարկուածներ ռանենալով: Իրենց նպատակն է, կ'ըսուի, շարքերով ու արիւնահեղութեամբ եսրոպական միջամտութիւն յոսաւ բերել և այդպէսով տապալել արդի թեժիւր:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՍԱՍՈՒՆԻ ՄԷՉ. Պերլիներ կը հաղորդուի թէ Սասուն այնպէս մը շրջապատուած է չորս քիւրդ գօրագնդերէ որ նոյնիսկ Մուշի մէջ, որ քիչ մը տեղ միայն հետո է, բացարձակապէս ոչինչ կը գիտցուի հոն անցած դարձածէն: Ո և է շար հասած չէ Պոլիս: Ետ խժոժութիւններ պատահած ըլլալու են: Հայոց պատրիարքը, Բարձր Գրան արտօնութեամբ, քահանայ մը ղրկած է Մուշ տեղեկութիւն ստանալու համար: Կը հաստատեն թէ Քիւրտերը խոնոտած են Սասուն, թէ գործողութեանց հրամանները ուղղակի իրարմէն կը մեկնին: Այս ամենը, ինչպէս նաև գառաւերտը իջեւաններ ղրկուած ըլլալը կառավարութիւնը անգիտանալ կը ձեռացնէ:

ՆՈՐ ՀՄՍՑԷ

«ՆՈՐ ԿԵՍՆՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժնեգրին ղրկել հետեւեալ հասցէին:

REDACTION DU "NOR-GUIANK"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՍՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգրին է Եսրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: